Քրիստոնյա Հայաստան

2019, ԱՊՐԻԼ Ա, ԹԻՎ 7 (531)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքի հանդիպումը Մոսկվայում

ԱՊՐԻԼԻ 2-ին Մոսկվայում՝ Սուրբ Դանիելի պատրիարքանիստ վանքում, տեղի ունեցավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի հանդիպումը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղեկցող պատվիրակության կազմում էին Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ եզրաս արք. Ներսիսյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե ծ. վրդ. Անանյանը, գավազանակիր Անանիա աբղ. Ծատուրյանը եւ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քհն. Մելիքյանը:

Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ բարիգալստյան եւ ողջույնի պաշտոնական խոսքերի փոխանակում:

Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում մասնավորապես ասաց.

«Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Եղբայրական ջերմ սիրով եւ առ Աստված աղոթքով ողջունում եւ կրկին շնորհավորում ենք Ձեզ՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարքական գահին Ձեր ընտրության 10-ամյակի առիթով: Ուրախ ենք վերստին գտնվելու Մոսկվայում եւ հանդիպելու Ձեզ՝ փոխանցելու քաջառողջ արեւշատության եւ երկար ու արդյունաշատ գահակալության մեր եղբայրական բարեմաղթանքները: Մեր սրտագին աղոթքն է, որ Բարձրյալն Աստված Իր օրհնության ու խնամքի ներքո պահի Ձեզ, Ռուս Եկեղեցու հոգեւորականաց ողջ դասին ու ռուս հավատավոր եղբայր ժողովրդին: Ուրախալի է տեսնել նաեւ, որ ՌԴ իշխանությանց եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջեւ հաստատված հարաբերություններն արգասավորվում են բարի արդյունքներով՝ ի նպաստ Ռուսիո հավատավոր ժողովրդի հոգեւոր-եկեղեցական, հասարակական կյանքի առաջընթացի եւ պայծառության: Ձեր հովվապետության տարիներին Աստծո ողորմությամբ նշանակալի ձեռքբերումներ ու իրագործումներ են արձանագրվել քարոզչական առաքելության, կրթական, սոցիալական, եկեղեցաշինության եւ բազում այլ ոլորտներում: Ձերդ Սրբության առաքելության մեջ առաջնային տեղ են գրավում նաեւ Ձեր ջանքերը՝ հանուն ազգերի, Եկեղեցիների ու կրոնների միջեւ հարաբերությունների ու գործակցության զորացման:

Գոհունակություն է Մեզ համար անդրադառնալ մեր հավատակից ժողովուրդների դարավոր եղբայրական կապերին, որ զորանում են մեր պետությունների միջեւ համագործակցությամբ եւ մեր քույր Եկեղեցիների զորացող փոխհարաբերություններով եւ աղոթական ջանքերի մեկտեղումով: Մեր երկրների ու ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար կարեւոր կամուրջ է հանդիսանում Ռուսաստանի հայ համայնքը, որ վայելելով երկրի իշխանությանց բարյացակամությունը եւ Ձերդ Սրբության հայրական վերաբերմունքը՝ իր բարի նպաստն է բերում Ռուսիո պետության զարգացմանն ու հասարակական կյանքի առաջընթացին:

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, մեր տարբեր հանդիպումների ընթացքում հաճախ ենք անդրադարձել ներկա ժամանակի մարտահրավերներին, երբ կյանքի ընթացող ճանապարհները հաճախ մարդկանց հեռացնում են Աստծուց, երբ անսքող են հոգեւոր եւ բարոյական արժեքների ոտնահարումը, ազգամիջյան անհանդուրժողականությունը, ահաբեկչությունն ու պատերազմը, կարիքն ու աղքատությունը, գլոբալիզացիայի համահարթեցնող ու բացասական արտահայտությունները, որոնք հրամայական են դարձնում քրիստոնեական եկեղեցիներիս ավելի սերտ գործակցությունը մեր առաքելության արդյունավորման ուղղությամբ: Ձեր միջեկեղեցական եւ հովվապետական առաքելության մեջ Դուք մշտապես հանդես եք եկել հոգեւոր-բարոյական արժեքների պահպանման ու արժեւորման տեսլականով, պետական, հասարակական կյանքում այդ արժեքների տարածման եւ վերարժեւորման գաղափարով ու մոտեցմամբ: Այս իմաստով հատկապես ուրախ ենք արձանագրելու Արեւելյան Ուղղափառ եւ Օրթոդոքս Եկեղեցիների միջեւ համագործակցության առավել ամրապնդումը եւ ուժերի մեկտեղումը սոցիալական, հումանիտար ու հասարակական ամենատարբեր հարցերում՝ հատկապես հաշվի առնելով մեր Եկեղեցիների միջեւ փոխգործակցության գեղեցիկ ու մխիթարիչ օրինակները Մերձավոր Արեւելքի բարդ համատեքստում:

Սիրեցյալ եղբայր, հոգեւոր գոհունակությամբ եւ գնահատանքով ենք կամենում անդրադառնալ նաեւ Ձեր՝ որպես Ռուս Ուղղափառ Եկեղեցու Հովվապետի ունեցած կարեւոր դերակատարությանը ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ լուծմանն ի խնդիր հոգեւոր պետերիս եռակողմ հանդիպումների կազմակերպման գործում: Այսօր մեր ժողովուրդը, կորստի ցավն իր սրտում, հարգում եւ ոգեկոչում է պանծալի հիշատակը իր հերոս զավակների, որոնք զոհվեցին 2016 թ. ապրիլի 2-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված քառօրյա պատերազմում: Արցախյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորումն էական է տարածաշրջանում խաղաղության եւ կայունության պահպանման համար: Հիմնախնդրի հանգուցալուծման համար առաջնային կարեւորություն ունի խաղաղությանը նպաստող միջավայրի հաստատումը, այդ թվում՝ փոխվստահության միջոցառումների իրականացման ու ռազմատենչ հռետորաբանության նվազեցման միջոցով: Հայաստանի եւ Արցախի իշխանությունները եւ ժողովուրդը հաստատակամ են խաղաղության եւ համերաշխության իրենց ձգտման մեջ: Այդ ճանապարհը, սակայն, միակողմանի չի կարող լինել:

Այս առումով ցանկանում ենք Ձեր ուշադրությանը ներկայացնել նաեւ մեկ դեպք: Վերջերս Ադրբեջանում 20 տարվա ազատազրկման դատապարտվեց դեռեւս ամռանը չբացահայտված պայմաններում Ադրբեջանի տարածքում հայտնված Տավուշի մարզի Բերդավան գյուղի բնակիչ Կարեն Ղազարյանը, որն ունի հոգեկան խնդիրներ: Դատական այդ որոշումը կայացվեց մարդու իրավունքների բացահայտ խախտմամբ: Այս հարցում, նկատի ունենալով հոգեւոր պետերիս նախորդիվ ունեցած փորձառությունը, դիմում ենք Ձերդ Սրբության միջնորդությանը Ադրբեջանի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությանց առջեւ՝ միջազգային պարտավորությունների պահպանումով երիտասարդին վերադարձնելու իր ընտանիք:

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Վերստին, սիրո եւ եղբայրության ողջույնով, մաղթում ենք Ձերդ Սրբությանը մեր Տիրոջ զորակցությունն ու առատ շնորհները, որպեսզի շարունակեք իմաստնաբար առաջնորդել Ձեր հավատացյալ հոտը՝ ի պայծառություն Ռուս Ուղղափառ Եկեղեցու եւ ի հոգեւոր մխիթարություն համայն հավատացյալ Ձեր ժողովրդի»:

Իր հերթին Նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքը, շնորհակալություն հայտնելով իր գահակալության 10-ամյակի կապակցությամբ Վեհափառ Հայրապետի կողմից հղված շնորհավորական ուղերձի եւ բարեմաղթանքների համար, գոհունակություն հայտնեց, որ անցած տասը տարիների ընթացքում Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների հարաբերությունները հատկանշվել են եղբայրական սիրով եւ ջերմությամբ: Իր խոսքում Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքը անդրադարձ կատարեց Ռուսաստանում հայոց թեմի աշխույժ գործունեությանը եւ ակտիվ ներգրավվածությանը՝ երկու Եկեղեցիների կապերի զորացման գործում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում Ռուս Ուղղափառ Եկեղեցու հովվության ներքո գտնվող համայնքի հոգեւոր կյանքին:

Հավարտ հանդիպման՝ երկու Հովվապետերը գոհունակությամբ հաստատեցին երկու ժողովուրդների եւ Եկեղեցիների միջեւ զարգացող փոխգործակցությունը եւ համագործակցությունը՝ միջեկեղեցական եւ միջազգային ամենատարբեր հարթակներում կրոնական-հասարակական հիմնախնդիրներին ընդառաջ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Ավետման տոնի եւ Մայրության ու գեղեցկության օրվա առիթով

ԱՎԵՏՄԱՆ տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում բոլոր կանանց՝ մեր մայրերին ու քույրերին եւ հավատավոր համայն մեր ժողովրդին:

Սուրբ Աստվածածինը Աստուծո Որդու մայրը լինելու իր ողջ փառքի ու մեծության մեջ ամենապատվավոր իր տիտղոսը համարեց «Տիրոջ աղախին» լինելը՝ արձագանքելով հրեշտակապետի ավետիսին. «Ահաւասիկ կամ աղախին Տեառն»: Աստվածամոր սիրո ու հնազանդության ոգին է ներշնչել ու ներշնչում մեր մայրերին՝ զավակների ու ընտանիքի նկատմամբ իրենց բերած նվիրումի ու հավատարմության մեջ: Արդարեւ, մայրերը Աստծո սիրո ու խնամքի պատգամախոսներն են մեր ընտանիքներում:

Սիրելի՛ մայրեր ու քույրեր,

2019 թվականը, որ հռչակված է Ընտանիքի տարի, եւս մեկ առիթ է վերարժեւորելու ու վերագնահատելու այն պատասխանատու, բայց նաեւ անչափ քաղցր առաքելությունը, որ դուք ունեք ընտանիքի ամրության, սերունդների կրթության ու դաստիարակության, որով եւ՝ մեր ժողովրդի ապագայի կերտման գործում: Հայցում ենք Աստվածամոր բարեխոսությունը եւ աղոթում Աստծուն, որ Իր անսպառ շնորհներով շարունակի բարեգթել ձեր հոգիները, պարգեւի ձեզ անսպառ մխիթարություններ ձեր զավակների կերտած հաջողություններով:

Թող երկնավոր Տերը առողջ ու կենսախինդ պահի ու պահպանի բոլոր կանանց՝ մեր մայրերին ու քույրերին եւ քրիստոնեական առաքինությունների մեջ՝ ամուր ու անսասան հայ ընտանիքները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն Ավետման տոնի առիթով շնորհավորեց Մայր Աթոռի աշխատակցուհիներին

ԱՊՐԻԼԻ 8-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ս. Աստվածածնի ավետման տոնի առիթով հանդիպեց Մայր Աթոռի կառույցներում պաշտոնավարող աշխատակցուհիների հետ:

Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի պատասխանատու Նաթան արք. Հովհաննիսյանի ողջույնի խոսքից հետո Նորին Սրբությունն իր հայրական օրհնությունն ու շնորհավորանքները բերեց ներկաներին:

Գարեգին Բ Հայրապետն իր գնահատանքը փոխանցեց Մայր Աթոռի աշխատակցուհիներին՝ իրենց անսակարկ ու նվիրյալ ծառայության համար, որով նպաստում են Եկեղեցու հեղինակության բարձրացմանը եւ առաքելության արդյունավոր իրականացմանը:

Անդրադարձ կատարելով սուրբ Աստվածամոր կերպարին՝ Նորին Սրբությունը պատգամեց կանանց լինել հայի բարոյական կյանքի կերտողը, մշտապես ջերմության եւ ուրախության մեջ պահել հայկական օջախները: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց ներկաներին իրենց օրինակելի ընթացքով եւ ընտանիքի հանդեպ ունեցած նվիրումով շենացնել հայոց կյանքը եւ իրենց հայրենասիրությամբ զորացնել հայրենիքը:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ տեղեկացրեց Ավետման տոնին Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում Սուրբ Աստվածածին նորակառույց առաջնորդանիստ եկեղեցու օծման արարողության մասին՝ ընդգծելով, որ այն մեծ ու բերկրառատ իրադարձություն էր ողջ արցախահայության համար:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հայցելով սուրբ Աստվածամոր բարեխոսությունը, ներկաներին մաղթեց արեւշատություն եւ խաղաղ ու բարօր կյանք Տիրոջ ամենախնամ Սուրբ Աջի ներքո:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

5 ապրիլի **Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի նախագահին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանի եւ երկրորդ սենատի նախագահ Անդրեաս Ֆոսկուլեին եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանի:

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահը Նորին Սրբությանը ներկայացրեց Գերմանիայի եւ Հայաստանի Սահմանադրական դատարանների փոխգործակցությունը՝ բարձր գնահատելով նաեւ այցի ընթացքում արձանագրված արդյունքները: Պրն Հրայր Թովմասյանը նաեւ ընդգծեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարեւոր դերակատարությունն ինչպես ազգի ինքնության պահպանման, այնպես եւ հայ իրավագիտության զարգացման գործում:

Այնուհետեւ հյուրերին ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ գոհունակություն հայտնելով երկու երկրների միջեւ զարգացող հարաբերությունների կապակցությամբ, որոնք նպաստում են հայ եւ գերմանացի ժողովուրդների բարեկամական կապերի խորացմանը: Վեհափառ Հայրապետը գնահատանքով արձանագրեց սահմանադրական դատարանների միջեւ սերտ գործակցությունն իրավական ոլորտում:

Գարեգին Բ Հայրապետը մասնավորապես անդրադարձ կատարեց Եվրոպայում արդի իրավունքին եւ ՀՀ Սահմանդրությանը, որոնց ակունքներում քրիստոնեական արժեհամակարգն է՝ խոսելով նաեւ ընդհանուր առնչությունների մասին:

Իր հերթին Անդրեաս Ֆոսկուլեն փաստեց, որ երկու երկրների գործակցությունն իրավական դաշտում լավագույն վկայությունն է Հայաստանի եւ Գերմանիայի բարեկամական եւ սերտ հարաբերությունների մասին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդյունավոր առաքելություն մաղթեց պրն Անդրեաս Ֆոսկուլեի գլխավորած պատվիրակությանը:

9 ապրիլի **ՀՀ-ում ԱՄՆ-ի նորանշանակ դեսպանին**



ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան տիկին Լին Թրեյսիին:

Նորին Սրբությունը շնորհավորեց դեսպանին նշանակման առիթով՝ արդյունավոր առաքելություն մաղթելով Հայաստանում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ արձանագրեց Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ առկա համագործակցությունն ու բարեկամությունը, ինչին կարեւոր իր նպաստն է բերում նաեւ ԱՄՆ-ի հայ համայնքը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց երկրի առջեւ ծառացած մարտահրավերներին ու դժվարություններին, ինչպես նաեւ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը՝ ի նպաստ Հայաստանի եւ Ադրբեջանի հոգեւոր պետերի կողմից ձեռնարկվող խաղաղարար ջանքերին:

Գարեգին Բ Հայրապետը եւ ԱՄՆ-ի դեսպան Թրեյսին նաեւ զրուցեցին հայ ժողովրդի կյանքում ինչպես անցյալում, այնպես եւ այսօր Հայոց Եկեղեցու հոգեւոր եւ ազգապահպան առաքելության մասին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Ստեփանակերտի Ս. Աստվածածին եկեղեցին

ԱՊՐԻԼԻ 7-ին՝ Ս. Աստվածածնի ավետման տոնին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Ստեփանակերտի Ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցու օծման արարողությունը:



Սրբազան արարողությանը ներկա էին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, Արցախի թեմի հոգեւոր սպասավորներ, Արցախի եւ Հայաստանի Հանրապետության իշխանությունների ներկայացուցիչներ, եկեղեցու կառուցմանն իրենց աջակցությունը բերած բարերար հայորդիներ, Հայաստանի տարբեր թեմերից ժամանած եկեղեցականներ, ուխտավորներ եւ հավատավոր բազում արցախցիներ:

Հընթացս օծման սրբազան արարողության՝ սաղմոսերգության ներքո ջրով եւ գինով լվացվեցին տաճարի սուրբ Սեղանը եւ օծվելիք սյուները: Այնուհետեւ Հայոց Հայրապետը սրբալույս մյուռոնով օծեց եկեղեցու ս. Սեղանը: Թեմական առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանի, Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի պատասխանատու Նաթան արք. Հովհաննիսյանի, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Չուլջյանի, Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արք. Աջապահյանի, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանի, ՀՅ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի, Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանի ձեռամբ օծվեցին խորանի՝ չորս ավետարանիչների անունը կրող սյուները եւ եկեղեցու մնացյալ սյուները:

Աղոթքներից եւ սուրբգրային ընթերցվածքներից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը նորակառույց եկեղեցին անվանակաչեց Սուրբ Աստվածածին:

Օծման արարողության ավարտին Նորին Սրբությունն Գարեգին Բ Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնեց արցախահայությանը եւ Սուրբ Ավետման տոնի եւ եկեղեցու օծման առիթով իր հայրապետական պատգամը բերեց ներկա ժողովրդին:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զի Աստուած ընդ մեզ է»:

(Եսայի Ը 10)

Մեծարգո Նախագահ Արցախի Հանրապետության,

Գերաշնորհ Պարգեւ Սրբազան, առաջնորդ Արցախի թեմի,

Մեծարգո վաստակյալ Նախագահ,

Գերաշնորհ, Հոգեշնորհ եւ Արժանապատիվ հայրեր,

Պատվարժան պետական այրեր,

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկել ենք Ավետման տոնի խորախորհուրդ այս օրը Մեր օրհնությունն ու գնահատանքը փոխանցելու արցախահայ Մեր սիրելի զավակներիդ եւ կիսելու հոգեւոր խնդությունն ու խանդավառությունը Ստեփանակերտի նորակառույց մայր եկեղեցու օծման առիթով: Արցախի գողտրիկ երկրամասում վեր խոյացած հայոց հավատի նոր վկայարանի հիմնարկեքը Մենք կատարեցինք 2006 թվականին՝ հավատով, որ Աստված միշտ մեզ հետ է եւ ձեռքբերումներ ու հաղթանակներ է պարգեւում մեր պայքարների ու մեր բոլոր բարի ձգտումների մեջ: Մեր ժողովրդի զավակաց ջանքերով վեր խոյացած այս եկեղեցին Աստծո օրհնությամբ ու շնորհով նոր ղողանջը պիտի դառնա մեր հավատքի ու հաղթական ոգու, նաեւ՝ ազդարարողը Արցախի մեր ժողովրդի ազատ ու անկախ կյանքի անօտարելի իրավունքի, ինչպես եւ վկայությունը մեր քրիստոնեական հավատի եւ ազգային ինքնության անխորտակելի շաղկապվածության:

Այսօր, սիրելիներ, տոնն է Սուրբ Աստվածածնի ավետման, երբ հրեշտակը Փրկչի Ծննդյան բարի լուրը հայտնեց Սուրբ Մարիամին՝ ասելով. «Ուրախացիր, ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է»: Հրեշտակի բարի ավետիսին Սուրբ Մարիամի խոնարհ ու հեզ պատասխանն էր. «Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը» (Ղուկ. Ա 28, 38): Ինչպես Սուրբ կույսը՝ ընտրյալ տաճար, խորան դարձավ Բարձրյալի Միածին Որդուն եւ փրկության շնորհաբերը՝ մարդկության համար, նույնպես եւ այս եկեղեցին փրկության շնորհներն է պարգեւելու հավատացյալներին, քանզի օծման սրբազան արարողությամբ եւ բարեպաշտ հայորդյաց ջերմեռանդ աղոթքներով նվիրագործվելով՝ քարեղեն շենքը այլեւս վերափոխված է Աստծո տաճարի:

Շարունակությունը՝ էջ 3

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Ստեփանակերտի Ս. Աստվածածին եկեղեցին

Սկիզբը՝ էջ 2

«Զի Աստուած ընդ մեզ է»: Որքա՜ն հավատ եւ ուրախություն է բովանդակում այս արտահայտությունը: Աստծո զորակցության հավատն ու գիտակցությունը վճռական դերակատարություն են ունեցել մեր ժողովրդի կյանքում: Մեր պատմության տարբեր ժամանակաշրջաններում, զանազան փորձություններին հանդիման մենք ծագործ ու համերաշխ կյանքի ջատագով, որին խորթ են բռնությունն ու ռազմատենչությունը: Մեր հայրենական ու ազգային կյանքին սպառնացող վտանգի առջեւ մենք երբեք չենք ընկրկել ու չենք ընկրկելու եւ միշտ պաշտպան ենք կանգնելու մեր սրբություններին՝ հայրենի մեր հողին, մեր ընտանիքներին, լեզվին ու մշակույթին, մեր սրբավայրերին:

Աստծո շնորհընկալն ենք դարձել եւ հերոսաբար պայքարել թշնամիների դեմ՝ միշտ հավատալով, որ «եթե Տերը մեզ հետ է, ապա ո՞վ կարող է լինել մեզ հակառակ» (հմմտ. Հռոմ. Ը 31): Այս զորեղ հավատով եւ առ Աստված ապավինությամբ են կերտվել մեր հաղթանակները, պաշտպանվել մեր հոգեւոր-ազգային սրբազան արժեքները, այս քաջալերանքով են հասակ առել սերունդներ, որոնք ազատատենչ ոգով արցախյան հերոսամարտը պսակեցին հաղթանակով: Սիրելի արցախցիներ, ո՞վ, եթե ոչ դուք, լավագույնս գիտեք արժեքն ու զորությունը «Աստված մեզ հետ է» հուսառատ հավատի, քանզի Արցախի ազատ ու անկախ կյանքի համար մղված արդար պայքարում թրծված ձեր հավատը եւ քաջարի ոգին պտղաբերեցին մեր նորագույն պատմության էջերում ոսկյա տառերով արձանագրված Արցախի հերոսամարտի փառապանծ հաղթությամբ: Այսօր մենք ամենքս այստեղ ենք

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, այսօր խոսեցինք հավատքի զորության եւ սրբությունների պահպանության կարեւորության, քաջության ու սխրանքի մասին: Ձեր կյանքը եւ ամենօրյա կեցությունն արդեն իսկ արիության ու քաջագործության պանծալի դրսեւորում են՝ հայրենի հողը պաշտպանելու անսասան նախանձախնդրությամբ: Ձեր հերոսական կեցվածքով ու արցախյան ազատամարտի փառավոր հաղթանակով դուք մեր սիրելի Արցախը դարձրել եք մեր ժողովրդի ինքնության պատմության կարեւոր վկայություններից մեկը եւ մեր ազգային նկարագրի դրսեւորման գեղեցիկ արտահայտություն:

Հայրական Մեր հորդորն է, որ նույն ընթացքով ու վճռականությամբ շարունակեք ձեր կյանքը, այսպես ամուր մնաք առ Աստված ու առ հայրենին ձեր սիրո ու նվիրումի մեջ՝ հանուն արցախահայության բարօր ու շեն կյանքի, մեր ժողովրդի իղձերի իրագործման:

Ուրախալի այս առիթով Մեր օրհնությունն ու գնահատանքը ենք բերում Արցախի թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, ինչպես նաեւ թեմի հոգեւորականաց՝ իրենց նվիրյալ ծառայության համար: Սիրելի Սրբազան, գիտենք, թե ինչպիսի նախանձախնդրությամբ եք տարիներ շարունակ ջանք ու եռանդ բերել Արցախի հոգեւոր կյանքի զորացման, ինչպես եւ Արցախի սրտում այս եկեղեցու կառուցման համար: Թող Աստված շնորհի Ձեզ քաջառողջություն, երկնահեղ օրհնություններ ու ամենայն բարիք եւ Իր աջակցությամբ նորանոր ձեռքբերումներ պարգեւի տերունապատվեր ծառայության ճանապարհին:

Մեր գնահատանքն ենք հայտնում Արցախի իշխանություններին, ի մասնավորի՝ Արցախի նախագահ մեծարգո տիար Բակո Սահակյանին, որի հետեւողական ջանքերի եւ աջակցության շնորհիվ այսօր մեր ժողովրդի առջեւ իր դռները բացեց Ստեփանակերտի առաջնորդանիստը: Մեր գնահատանքը նաեւ վաստակյալ նախագահ մեծարգո տիար Արկադի Ղուկասյանին, որի պաշտոնավարման շրջանում դրվեցին եկեղեցու հիմերը:

Անկարելի պիտի լիներ այս առաքելության իրագործումը պատկերացնել առանց մեր հավատավոր բարերար զավակների զորակցության: Այս նպատակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նվիրաբերությամբ սկզբնավորված դրամահավաքը իսկապես վերածեց համընդհանուր հանգանակության: Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք հայտնում աստվածահաճո այս գործում ներդրում բերած բոլոր անձանց, մասնավորաբար գլխավոր բարերար Վարդանյան բարեպաշտ եղբայրներին եւ տիար Վիտալի Գրիգորյանցին: Մեր գնահատանքն ենք փոխանցում եկեղեցու ճարտարապետին, շինարարներին եւ վարպետներին: Սուրբ Էջմիածնի օրհնությունն ու սերն ենք բերում մեր հերոս արցախցիներին՝ հաստատակամություն մաղթելով մեր համազգային պայքարի առաջնագծում՝ հանուն Արցախի ազատ ու անկախ կյանքի, շեն ու բարգավաճ ապագայի:

Սուրբ Աստվածածնի ավետման բերկրալի տոնի առիթով հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում արցախաբնակ մեր մայրերին ու քույրերին: Բարձրորեն գնահատում ենք ձեր կարեւոր առաքելությունը, որ դուք ունեք Արցախի մատաղ սերնդին դաստիարակելու, քաջարի ոգով զորացնելու, ձեր ընտանիքներում երջանկությունն ու սերը հաստատուն պահելու աստվածահաճո գործում: Հայցում ենք Աստվածամոր բարեխոսությունը եւ աղոթում, որ Աստված Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո պահի ու պահպանի ձեզ առողջ, բարօր ու քրիստոնեական առաքինություններով զարդարյալ:

Սիրելիներ, Սուրբ Պատարագի ընթացքին կատարելու ենք նաեւ Հանրապետական մաղթանք՝ մեր հայցը առ Աստված բարձրացնելով Արցախի շինության ու անսասանության, առաջընթաց ու եկեղեցին եւ Արցախի թեմը: Թող մեր բարեպաշտ զավակները ապրեն խաղաղ երկնքի ներքո ստեղծագործ կյանքով՝ աստվածային զորակցության ու շնորհների համար գոհունակ սրտով մեր աղոթատներում փառաբանելով Ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն. ամեն:

Իր պատգամի ավարտին Հայոց Հովվապետը նորաօծ եկեղեցուն ընծայեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերված Տիրոջ Սուրբ Ծննդյան սրբապատկեր, որպեսզի այդ տերունական օրհնյալ պատկերի առջեւ աղոթելով՝ հավատավոր արցախցիներն արժանի դառնան Տիրոջ բերած փրկության բյուր շնորհներին:

Երկարամյա հոգեւոր ծառայության եւ վաստակի գնահատանքով Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պարգեւ սրբազանին շնորհեց եպիսկոպոսական պանակ՝ Տիրոջ Սուրբ Աջի հանապազ զորակցության սրտագին մաղթանքով:

Նորին Սրբությունն իր առանձնակի գնահատանքը հայտնեց եկեղեցու կառուցման հիմնական բարերարներ Միքայել եւ Կարեն Վարդանյաններին՝ նրանց արժանացնելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշանին՝ եկեղեցաշահ իրենց գործունեության, հոգեւոր-եկեղեցական կյանքի առաջընթացին բերած գովարժան ներդրումի եւ բարի հանձնառությունների համար:

Այս ուրախալի առիթով Արցախի թեմի առաջնորդը Վեհափառ Հայրապետին ընծայեց Ծիրանավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու ժէ դարի պատմական սկիհը՝ պատշաճ նկատելով, որ այն պահպանվի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Այնուհետեւ նորաօծ եկեղեցում մատուցվեց Պատարագ՝ ձեռամբ Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Ծաղկազարդի կոնար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



ԱՊՐԻԼԻ 14-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակը՝ Ծաղկազարդը: Տոնը տարիներ առաջ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ նաեւ հռչակվել է որպես Մանուկների օրհնության օր:

Առավոտյան ժամերգության ավարտին Մայր տաճարի շրջափակում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Անդաստանի արարողություն եւ մանուկների օրհնության կարգ: Այնուհետեւ Նորին



Սրբությունն իր օրհնությունը բաշխեց Մայր Աթոռում համախմբված բազում մանուկների՝ նրանց ընծայելով խաչիկներ, իսկ հավատավոր ժողովրդին բաժանվեցին Անդաստանի ընթացքում օրհնված ուռենու ճյուղերը:

Տոնի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը Պատարագի արարողությանը մասնակցեց Ս. Գայանե եկեղեցում: Պատարագիչն էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը: Պատարագին ներկա էին տարբեր երկրներից ժամանած՝ Մայր Աթոռի բարերարներ:

Մուշեղ սրբազանն իր քարոզում մասնավորապես նշեց. *«Սիրելիներ, երբ Տերը մուտք է գործում Երուսաղեմ, մարդիկ ամենայն ուրախությամբ եւ անկեղծ ցնծությամբ օվսաննաներ էին բացականչում, սակայն նույն այդ ժողովուրդը՝ ամբոխ դարձած, օրեր անց Պիղատոսի առջեւ կանգնած, պիտի սառնասրտորեն պահանջեր ու գոչեր. «Խաչը հանիր, խաչը հանիր դրան» (Հովհ. ԺԹ 6): Հիսուս գիտեր ամեն բան: Գիտեր, որ հաղթական այդ մուտքը միաժամանակ եւ վերջն էր: Այս ամենով հանդերձ՝ մարդ արարածի հանդեպ Իր անհուն սիրով լցված եւ հնազանդվելով Հոր կամքին՝ ուղղեց Իր քայլերը դեպի մահ, որն Իր կյանքը խլող մարդկությանը պիտի տար կյանք: Նա մտավ երկրային Երուսաղեմ՝ այն երկնային Երուսաղեմ դարձնելու վճռականությամբ:*

Այս պահին, սիրելի՛ հավատացյալներ, խնդրանքս ու հորդորս է, որ ամեն մեկս զուգահեռներ տանենք մեզանից յուրաքանչյուրի ու այն մարդկանց միջեւ, որոնք Աստվածորդու այս պանծալի մուտքը Երուսաղեմ եզրափակեցին Նրան խաչի չարչարանաց եւ մահվան մատնելով: Եկեք միասին փնտրենք ու հասկանանք, թե որտեղ սխալվեց օվսաննա բացականչող ժողովուրդը, ինչ մոլորության մեջ հայտնվեց, որ փոխեց «օրհնյա՛լ է Նա» սաղմոսերգությունը «խաչը հանիր» վանկարկումով: Նմանապես մենք, որտե՞ղ ենք սխալվում ու մոլորության մեջ ընկնում մեր կյանքի ընթացքում: Քանզի երբ Քրիստոս խոսում էր այն օրերի մարդկանց հետ եւ ուսուցանում նրանց, ապա դա միայն նրանց չէր վերաբերում, այլ մեզանից յուրաքանչյուրին, որն այսօր ցնծությամբ դիմավորում է Փրկչին ու, միգուցե, կրկին մահվան դատապարտում Նրան:

....Ամենքս էլ մեր կյանքում որոշումներ ենք կայացնում եւ ամեն ջանք գործադրում այն իրագործելու, քանի որ վստահ ենք, որ վերջնապատակը մեր իսկ անձնական բարու համար է: Դժվար է, որոշման վերջնական արդյունքն իմանալով, գնալ այնուամենայնիվ դրան, երբ գիտես, որ ոչ միայն դա անձնապես քեզ լավ չէ, այլեւ ավարտը մահ է: Գնալ գիտակցված մահվան: Սա էր Քրիստոսի ընտրությունը, որոշումը Երուսաղեմ գնալու, երբ գիտեր, որ այնտեղ պիտի խաչը հանվի: Բայց եւ գիտեր, որ մեկի մահը միլիարդներին հավիտենական կյանք պիտի պարգեւեր: Սա է պատգամը: Հերոսներն այս գիտակցությունն ունեն: Մեզ կյանք տալու համար նրանք նահատակություն են ճաշակում: Քրիստոսակիր մեր հերոսները կյանք պարգեւելու համար են գնում մահվան: Եվ, որպես Քրիստոսի հետեւորդներ, մուտք են գործում երկնավոր Երուսաղեմ»:

Սրբազան հայրը կոչ արեց հավատացյալներին՝ ընտրել ու ոտք դնել այն ճանապարհին, որը երկնային Երուսաղեմ է առաջնորդում, եւ ամեն մեկն իր գիտակցության մեջ պահպանի այն ճշմարտությունը, որ մարդ արարածը միայն Քրիստոսով է կենդանություն ստանում, միայն Նրանով է մաքրվում ու հարստանում մարդկային հոգին, միայն Քրիստոս է, որ իրական ու հարատեւ երջանկություն է պարգեւում, միայն Քրիստոսով է, որ ճանաչում է իրական, անկեղծ ու անձնուրաց սերը:

Մուշեղ եպիսկոպոսը հաստատեց նաեւ, որ Հիսուս շատ է սիրում մանուկներին եւ հորդորում է մեզ, որ նրանց պես լինենք մաքուր ու անարատ՝ արժանանալու համար Տիրոջ տեսությանն ու երկնքի արքայությանը:

«Մանկան մաքրություն, պարզություն եւ անմեղություն. այս է, սիրելիներ, որ այսօր պիտի ունենանք յուրաքանչյուրս, պարզ, շիտակ եւ մաքուր հոգի՝ պատրաստ ոչ միայն միմյանց օգնելու, այլեւ կարեկից լինելու, պատրաստ՝ ընդունելու Հիսուս Քրիստոսին, որ հավիտյան բնակվի այնտեղ, այլ ոչ թե կրկին խաչը հանենք մեր գործերով»,- ընդգծեց պատարագիչ սրբազանը՝ միաժամանակ հորդորելով աղոթք բարձրացնել առ Քրիստոս, որ Նա Իր հաղթական մուտքով հրավառի բոլորի հոգիները, ցանի սիրո կենարար հունդերը մարդկանց սրտերի մեջ եւ ամենքին պարգեւի փրկարար, գթառատ ու հոգեշահ ներշնչանքներ՝ ի բարօրություն մեր հայրենիքի եւ Եկեղեցու:

Ս. Պատարագի ավարտից հետո Ս. Գայանե վանքի շրջափակում կատարվեց մանուկների օրհնության արարողություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունը բաշխեց տոնի առիթով Հայաստանի տասներկու տարբեր մանկատներից Մայր Աթոռ ժամանած շուրջ 200 երեխաների՝ նրանց բաժանելով նաեւ խաչիկներ: Վերջիններս նաեւ ներկա գտնվեցին Էջմիածնի «Հրաչ եւ Սյուզն Թուֆայան» հայորդյաց տանը՝ իրենց համար կազմակերպված գեղարվեստական միջոցառմանը: Այնուհետեւ Մայր Աթոռի սոցիալական ծառայության գրասենյակի կողմից երեխաները հյուրասիրվեցին Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող բարեգործական ճաշարանում:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը Վեհարանի առջեւ հանդիպեց «Դանիական Հայկական բարեգործական առաքելություն» հասարակական կազմակերպության եւ Արագածոտնի ու Տավուշի թեմերի համատեղ գործակցությամբ «Լույս մանկանց» ծրագրի շրջանակներում հիշյալ թեմերի 26 համայնքներում իրականացվող քրիստոնեական դաստիարակության լսարանների շուրջ 500 երեխաների հետ:

Իր հայրական օրհնությունը փոխանցելով նրանց՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց, որ Մայր Աթոռ ուխտագնացությունը վերջիններիս Ս. Էջմիածնի հանդեպ անհուն սիրո վառ արտահայտություն է: Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց մանուկներին ու պատանիներին հանապազ աղոթել, որպեսզի միշտ հաղորդակցության մեջ լինեն Աստծո հետ, վայելեն Նրա օրհնությունը, անսահման սերն ու ողորմությունը:

Վերջում միասնական՝ Տերունական աղոթքից հետո Գարեգին Բ Հայրապետը մանուկներին նվիրաբերեց խաչիկներ:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Անանիա Շիրակացին եւ իր «Մեկնութիւն տոմարի» ժողովածուն

ԱՆԱՆԻԱ Շիրակացին վաղմիջնադարյան Հայաստանի մեծագույն գիտնականներից եւ հայ մատենագրության կարկառուն ներկայացուցիչներից է: Նրան իրավացիորեն կարելի է համարել տոմարագիտության, տիեզերագիտության եւ թվաբանության հիմնադիրը հայոց մեջ: Անանիա Շիրակացու աշխատություններն անվերջանալի գանձարան են համարվել տարբեր գիտություններով զբաղվող միջնադարյան գիտնականների համար: Այդ իսկ պատճառով է, որ եղել են դեպքեր, երբ նրա աշխատություններն ընդօրինակվել են, նույնիսկ «տառացի» արտագրվել: Այդպիսի գիտնականներից են եղել Հովհաննես Կոզեռն վարդապետը, Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Երզնկացին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթեւացին եւ այլք: Եվ ինչպես որ, օրինակ, Դիոնիսոս Թրակացու քերականությունը հիմք է հանդիսացել միջնադարյան շատուշատ հայ քերականների՝ մեկնողական աշխատությունների ստեղծման համար, այնպես էլ Անանիա Շիրակացու տոմարագիտությունը, տիեզերագիտությունն ու թվաբանությունը հենք են ծառայել տոմարական, թվաբանական գիտություններով զբաղվող միջնադարյան գործիչների համար: Աշոտ Աբրահամյանը կարծում է, որ Անանիա Շիրակացուց հետո հայերենով գրված տոմարական, տիեզերագիտական, թվաբանական գրվածքների մեծ մասը Շիրակացու գիտական աշխատությունների մեկնություններ են կամ էլ սովորական վերարտադրություններ *(այս մասին առավել մանրամասն տես Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 3)*:

Գիտենք, որ Անանիա Շիրակացու՝ մեզ հասած բնագրերի ընդօրինակություններում եւ ընդհանրապես պատմիչների երկերում Շիրակացու անվան վերաբերյալ որեւէ տարակարծություն չկա, ինչը չենք կարող նույնությամբ ասել նրա ազգանվան վերաբերյալ, որովհետեւ այն վկայված ենք գտնում տարբեր հոլովաձեւերով՝ Շիրակացի, Շիրակունւոյ, Շիրակայնւոյ, Շիրակվանցոյ, Շիրակվանցի, Շիրակունանցւոյ, Շիրակունանցի, Շիրակացւոյ, Շիրակացոյ, Շիրակունոյ, Շիրակայնւոյ, Շիրակացւոյն, Շիրականոյ, Անեցի եւ այլն *(տես Ռ. Վարդանյան, Անանիայի Շիրակացւոյ (Շիրակունւոյ) համարողի ՇԼԲ կարգը, Եր., 2015, էջ 3)*: Ռաֆիկ Վարդանյանը վերը թվարկվածներից առավել ընդունելի է համարում Շիրակացի ու Շիրակունի տարբերակները՝ որպես գավառանունից եւ տոհմանունից առաջացած ձեւեր, իսկ Գրիգոր Բրուտյանն առավել ճիշտ է համարում եւ հիմնականում կիրառում միայն Շիրակունի տարբերակը:

Շարունակությունը՝ էջ 6

Շահան Շահնուրի մի դասմվածքի գրական-գաղափարական մեկնումը

Սկիզբը՝ թիվ 5–6

Թեև Շահնուրն իր այս գործն անսովոր մի բան է անվանել, սակայն այդ այնքան էլ ճիշտ բնորոշում չէ: Իսկ եթե ճիշտ է, ապա միայն «հաւկիթի» վերաբերյալ, քանի որ դուրս եկած «թռչունը» շատ որոշակի է ու ճանաչելի եւ ասելիքի առումով բավական բարձր է ճախրում: Շահնուրն իր գրվածքներում միշտ էլ գրականության չափանիշ է ընդունել արվեստի առկայությունը եւ հաճախ խոսել հայ գրողների (բացառությամբ Ինտրայի եւ Ե. Տեմիճիպաշյանի) *«ամաթեորներ»* (սիրողականներ) լինելու մասին, որոնք իրենց գրականությունը սնուցել են շեշտված ազգային գաղափարախոսություններով, որոնց նա «պրոպագանդի գրականութիւն» է անվանում. *«…գրականութեան նիւթը հաւաքականութիւնը չէ, այլ անհատը»*,– իրավացիորեն գրել է նա իր «Ֆրանսիացի երիտասարդ գրագէտները եւ մենք» հոդվածում *(Շահնուր Շ., Սիրտ սրտի, Փարիզ, 1995, էջ 97)*:

Նման համոզում հայտնելով հանդերձ՝ Շահնուրն ինքն էլ է հաճախ հենց այդպես վարվել: Նրա հայերեն շատ գործեր լեցուն են հավաքական *«հայկականության»* գաղափարախոսությամբ ու հարցադրումներով: «Լիւքսէմպուրկի…» մշակման դեպքում եւս Շահնուրը ոչ միայն ծավալուն է դարձրել *«ազգային»* ուղղվածություն ունեցող իր խոսքը, այլեւ ավելի է ընդգծել եւ խորք հաղորդել:

Փարիզի «Զվարթնոց» պարբերաթերթում տպված «Ավագ ուրբաթ» *(տես «Զուարթնոց», Փարիզ, 1930, թիվ 8)* գործից հետո Շահնուրը «Լիւքսէմպուրկի պահապանները» գործով երկրորդ անգամ էր ներկայանում ընթերցողին որպես պատմվածքագիր՝ պահպանելով հանդերձ իր գրելաոճին բնորոշ գեղարվեստական պատումի, էսսեի, պատկերի, հրապարակախոսության ու խորհրդածության տարրերը: Կարելի է ենթադրել, որ իր այս երկու գործերի՝ նաեւ այդ հատկանիշներն են, որ նրան մղել են 1933-ին տպագրած «Յարալէզներուն դաւաճանութիւնը» պատմվածքների ժողովածուում դրանք չընդգրկելուն, որին պետք է ավելացնել նաեւ երկրորդ գործի ոչ միայն թռուցիկությունը, այլեւ ասելիքի ամբողջականության ու խորքայնության պակասությունները, որոնք եւ նրան մղել են վերանայելու այդ գործը՝ հստակեցումներ ու լրացումներ կատարելով ինչպես բովանդակային, այնպես էլ գեղարվեստական ոլորտներում:

Վերամշակված տարբերակի առնձնահատկություններից մեկն էլ այն է, որ գրողն այն ավելի ու ավելի է համեմել թե հումորի տարրերով եւ թե հասարակական-քաղաքական ու գաղափարախոսական կարգի հարցադրումներով: Իր գլխավոր ուղղվածությամբ պատմվածքի վերմշակված տարբերակը թեեւ մնում է նախորդում առաջ քաշված խնդրին հարազատ՝ ազգային ու գեղարվեստական արժեքներն ի վիճակի չեն պահպանելու նրանք, ովքեր հաճախ խոսում են դրանց անունից՝ ելնելով օտար ազդեցություններից, սակայն գրողը կարեւոր է համարել նաեւ պարզաբանել, թե արժեքներ ասելով՝ ինչ է հասկացվում, եւ արդյոք այդ ամենի (տվյալ դեպքում՝ Լյուքսեմբուրգի պարտեզի ու նրանում տեղադրված *«ձեռակերտ սինեմայի գործիքի մը»*) պահապանները երջանիկ խաբկանքի մեջ չեն գտնվում:

Շահնուրը վերոհիշյալ հարցադրումներին նոր տարբերակում շատ ավելի լայն ու ընդգրկուն իմաստ է հաղորդել. ժողովուրդներին համատարած քարոզվող բարոյական ու գաղափարական արժեքներն արդյո՞ք ընդունելի են եւ ենթակա պահպանման՝ անկախ այն բանից՝ կրոնակա՞ն են դրանք, թե՞ աշխարհիկ: Պատմվածքի վերամշակված տարբերակում երկու հատված վերաբերում են գործիքի ցուցադրած *«սինեմային»*: Առաջինի մասին մենք արդեն խոսել ենք, որտեղ իրոք անմեղ մանկական հետաքրքրություն ներկայացնող իրադարձություններ են պատկերվում: Այդ հատվածում գրողը կատարել է ոչ թե բովանդակային, այլ ոճային ու տրամաբանական ճշտումներ՝ այն դարձնելով ավելի ծավալուն. կա շունը, որն արդեն ոչ միայն ներկայություն է, այլեւ *«կ՚երազէ ոսկոր»*, ունի խոսուն անուն՝ Փաշա, կա *«օրիորդ, որ տիկին է»*, եւ որը *«թակարդ մըն է»* վիլլայի մանչուկին առեւանգելու գործում՝ մեկ միլիոն ֆրանկ փրկագին ստանալու համար: Շահնուրը մշակված տարբերակում հանել է առաջին տարբերակի այն հատվածը, թե *«շունը կ՚երթայ ոստիկանատուն»*՝ շանը վերապահելով միայն կենդանուն բնորոշ գործողություններ եւ արարքներ: Ցուցադրվող երկրորդ ժապավենը, որն առաջին տարբերակում բոլորովին բացակայում է, պարունակում է հասարակական ընդգրկուն ու խոր իմաստ ու թեեւ ներկայացվում է փոքրիկներին, սակայն մանկական չէ, ավելին՝ սարսափազդու է (պատկերվում է մայր բու (երեխաներից քիչ սիրված թռչուն), որը նմանեցվում է *«ուղղափառ կաթողիկոսի»*, ներկայացվում են *«Պարոն Պայ-Խուշը»* (ժողովրդական ընկալմամբ՝ չարագույժ, ահախոս) եւ մանավանդ *«Սուրբ Գրքին օձը»*, ուրեմն՝ խոսքն ուղղված է մեծերին՝ *«բոլոր անոնց»*, ովքեր «**խանգարուած տեսանողներ**» են (ընդգծումը – Ա. Ա.) ու նրանց կամակատարներին: Այս հատվածում գիշերային թռչունի՝ բուի կողմից երկնքից խլված լիալուսնի, լարախաղաց սկյուռի, Սուրբ Գրքի օձի, դռնփակ ժողովի, համայնակուլ բոցի, դժոխքի ակնարկումները այլաբանությամբ են լեցուն, որոնք ընդհանրական իրական կյանքն են ներկայացնում, առավել եւս՝ հայկական իրականությունը՝ իր դժնիություններով ու պարտադրանքներով, մանավանդ՝ մայր հայրենիքում 30-ական թվականներին հրապարակը տիրած ազատ մտքի ու կամքի այն արգելափակումները, որոնք արտահայտվում են *«Տեսանողի»* լարախաղաց գաղափարախոսություններով:

Տեսանող, որ *«նման է խանգարուած գործիքին»* եւ հռչակում է, թե *«…իրական կեանքը երկրի վրայ իսկ է, եթէ գիտցանք մղել եղբայրասպան կռիւ, շնորհիւ դասակարգային պայքարի»* (էջ 16):

Կյանքի ասպարեզը տիրող տեսանողի պահանջը, ըստ էության, պարտադրանք է, բռնացում մարդկային ազատ ու անկաշկանդ կամքի վրա: Շահնուրի ասածն այն է, որ կյանքն արգելափակող ու սահմանափակող շատ ձայներ մարդկանց ականջին հնչում են որպես հաճելի մեղեդի, որը կործանումների է հանգեցնում: Երկրորդ *«սինեմայում»* ներկայացված շատ բառեր ու բառակապակցություններ հագեցված են այլասացությամբ, որ արտահայտում են նման գաղափարախոսությունների էությունը, որ թեեւ հնչում են *«բարեկեցիկ»* եւ *«նուրբ սանտրով սանտրուած են»*, բայց որ *«արեւարգել-հովանոց»* են, *«շղթայող թակարդ»*: Այսինքն՝ այն, ինչ մարդկանց նետում է *«կես-քուն, կես-արթուն»* վիճակի մեջ, ներկայանում է որպես մեծություն. իրականում կյանքը դարձնում է զավեշտ՝ *«մանկական սինեմա»*: Պատմվածքում շատ որոշ է տրվում վերոհիշյալ իրողության գնահատականը. *«Վսեմ է եղբայրը, վսեմ է ընկերը... Երբ անոնք չեն նշանակեր «Եղիր եղբայրս, թէ չէ կը սպանեմ քեզ»* (էջ 17): Ասել է՝ լիալուսին սպանող, Հաննիբալ, որ դարպասների ետեւում է. «Annibal at portas»,- ինչպես գրում է Շահնուրը: Եվ երբ վիլլա (կյանք) մտած գողերը՝ բռնություն գործադրողները, դուրս կվռնդվեն այգուց, *«ծառուղին»* (կյանքը) կազատվի եւ կդառնա *«բուրումնաւէտ»*:

Շահնուրն իր պատմվածքի վերնագիրը երկու դեպքում էլ թողել է գրեթե նույնը (քիչ չեն դեպքերը, երբ իր գործերի վերնագրերը նա փոխել է. «Պարապ սենեակի պատճառաւ»-ը դարձել է «Հոսանքին եզրը», «Սիրտ կայ, որ կը ճաճանչէ»-ն՝ «Սիրտ սրտի» եւ այլն):

Շարունակությունը՝ էջ 6

Հայոց լինելության խորհուրդը

Ս. Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» վեպում

Պետք է դաստիարակվել Մեծ եղեռնի ու անզեն ժողովրդի սպանդի փորձով, իմանալ զենքի հարգը եւ երբեք հույսը չկապել խարդախ թշնամու հետ կամ նայել օտար դիվանագետների խարդախ քաղաքականության կողմը:

Ս. Ալաջաջյան

20-րդ դարավերջի հայ արձակն աչքի է ընկնում իրականության եւ մարդու հոգեբանության մեջ տեղի ունեցող տեղաշարժերի նկատմամբ ունեցած անմիջական վերաբերմունքով: Կա մի ընդհանուր հատկանիշ, որը բնորոշ է այդ տարիներին գրական ասպարեզ իջած հայ արձակագիրների գործերին. դա սեւեռուն ուշադրությունն է մարդու ճակատագրի նկատմամբ: Անհատի ճակատագրի մեջ հայտնաբերվում են ժողովրդական կյանքին հատուկ սոցիալ-պատմական հատկանիշներ ու գծեր: Մարդու հոգեւոր աշխարհը, նրա ներքին էությունն ու հոգեբանությունը արտացոլվում են երկրում տեղի ունեցող բազմապիսի տեղաշարժերով ու աշխարհում կատարվող իրադարձությունների համատեքստում: Ստեղծագործության առանցքային թեմա էր դառնում անցյալը, որն ընկալվում է իբրեւ շարունակվող ներկա, իսկ ներկան՝ իբրեւ անցյալի տրամաբանական շարունակություն:

Հայ ժողովրդի հասարակական կյանքում 50-ական թվականների կեսերից սկսված վերափոխումները բարենպաստ հող ստեղծեցին հայ արձակի զարգացման համար: 20-րդ դարի առաջին կեսի հայ արձակի մասին խոսելով՝ Հ. Թամրազյանը քննադատում է արձակի մեջ տիրող անկոնֆլիկտայնության տեսությունը, ըստ որի՝ բոլոր վեպերը վերջանում են այնպես, որ դրական մարդիկ հաղթանակ են նվաճում առանց կորստի ու զոհողության, եւ ստացվում է այն տպավորությունը, որ կյանքում վերացան բոլոր դժվարությունները *(Հ. Թամրազյան, Գրական ուղիներում, Եր., 1962, էջ 113)*: Անկոնֆլիկտայնությունն իր հետ հայ արձակ էր բերել բազմաթիվ թերություններ՝ արագ հարթեցվող հոգեբանական հակասություններ, աղավաղված լեզվամտածողություն, ընդհանուր պատումի հետ կապ չունեցող բնապատկերների առատություն եւ այլն: Կերպարներն էլ հանդես էին գալիս որպես գաղափարի ազդարարներ եւ ոչ թե գաղափարի կրողներ *(Ս. Աղաբաբյան, Արդիականություն եւ գրականություն, Եր., 1965, էջ 14)*:

1930–1950-ական թվականներին խորհրդահայ արձակում, եզակի բացառություններով, բացակայում էին ժամանակակից կյանքը, ժամանակակից մարդը, փոխարենն իշխում էր այդ մարդու կուսակցական՝ սովետական կերպարը:

«Հրաժարվելով իրականության գունազարդումից եւ անկոնֆլիկտայնության տեսությունից՝ հայ գրողն ավելի համարձակորեն սկսեց ուսումնասիրել կյանքի կոնֆլիկտները, արտացոլել ոչ միայն դրականը, այլ նաեւ զարգացման առաջընթացը կասեցնող բացասականը, դրանց բախման ռեալ ոլորտները: Հայ վիպասանը հնարավորություն ստացավ գրականության մեջ նվաճելու կյանքի նոր բնագավառներ, նոր թեմաներ, նոր պրոբլեմներ՝ ավելի համարձակորեն անդրադառնալով ժողովրդի հեռու եւ մոտիկ անցյալին, ազգային ճակատագրի պատմական ակունքներին»,– նշվում է «Ժամանակակից հայ արձակը» գրքում *(Ժամանակակից հայ արձակը, Եր., 1981, էջ 7)*:

«Հետպատերազմյան շրջանի մեր կյանքին նվիրված վիպական գրականության մեջ,– գրում է Հ. Թամրազյանը,– նկատվում է տեղաշարժ, այս կամ այն չափով գրքերի մեջ են ներխուժում իսկական կյանքը, սրտի թրթիռը, հոգու ջերմությունը, հասարակական ու անձնական ցավերը: Սա լուրջ երեւույթ է, եւ մենք սաղմերի մեջ տեսնում ենք մեր զարգացող գրականության գալիք դերը» *(Կ. Աղաբեկյան, Արդի հայ արձակի զարգացման միտումները: 1960–1980-ական թվականներ, Եր., 2008, էջ 40–41)*: Այդ նոր ու թարմ որակն էլ հայ արձակ էր բերում նոր ստեղծագործություններ: «Նոր որակը,– գրում է Ն. Ադալյանը,– սկզբնավորվում է ավագ եւ միջին սերնդի այն գրողների ստեղծագործություններից, որոնք դժվարությամբ ու համառորեն դուրս եկան զարգացման արդիական բնագիծ» *(Ն. Ադալյան, Սովետահայ պատմվածք, Եր., 1968, էջ 218)*, իսկ Կ. Դանիելյանն էլ, ընդգծելով դարավերջի հայ արձակի նվաճումները, նշում է ավագ ու միջին սերնդի ստեղծած այն գործերը, որոնցով «նոր ու արգասավոր հեռանկար է բացվում երիտասարդ սերնդի գեղարվեստական գործունեության առաջ» *(Կ. Դանիելյան, Գրականություն եւ իրականություն, Եր., 1986, էջ 198)*:

60-ական թվականներին հայ արձակի ասպարեզ մտած գրողների շարքում է Ս. Ալաջաջյանը: Նրա ստեղծագործության գլուխգործոցը «Եղեգները չխոնարհվեցին» վեպն է, որը Զեյթունի վերջին հերոսամարտի գեղարվեստական տարեգրությունն է, հերոսական մի ասք-պատում՝ կերպարների տիպականացմամբ ու հոգեբանական խտացումներով, հերոսական ներազդեցության ուժով: Այն 1960–ական թվականներին հայոց վիպասանության նվաճումներից է:

Շարունակությունը՝ էջ 7

Անանիա Շիրակացին եւ իր «Մեկնութիւն տոմարի» ժողովածուն

Սկիզբը՝ էջ 4

Շատ հակիրճ անդրադառնալով Անանիա Շիրակացու կենսագրական տվյալներին՝ պետք է նշել, որ անվանի գիտնականի ծննդյան ժամանակի մասին կան շատ տարբեր կարծիքներ: Գիտնականների մի մասը կարծում է, որ Անանիա Շիրակացին ծնվել է 6-րդ դարավերջին, 7-րդ դարասկզբին կամ 610-ական թվականներին (այսպես են մտածում Հ. Աճառյանը, Աշ. Աբրահամյանը, Հ. Անասյանը եւ ուրիշներ): Ֆ. Կոնիբերը Շիրակացու ծնունդը թվագրում է 600 թվականով, իսկ Ռ. Վարդանյանը տալիս է 626–631 թվականների միջակայքը *(տես Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 4)*: Անանիա Շիրակացին, մինչեւ դրսում ուսանելը, ավարտել է տեղի վարդապետական դպրոցներից մեկը (հավանական է՝ Դպրեվանքը) եւ շարունակել է զբաղվել ինքնակրթությամբ: Տեղեկություններից պարզ է դառնում, որ Շիրակացին, հասնելով Թեոդոպելիս, գտել է եղիազարոս անունով խելացի մեկին, որը հմուտ է եղել եկեղեցական գրքերի մեջ: Հիշատակված է նաեւ, որ նա ուսանել է Տյուքիկոս անունով անվանի վարդապետի մոտ *(տես նույն տեղում, էջ 8)*: Չենք ուզում ծանրացնել մեր շարադրանքը՝ քննելով Անանիա Շիրակացու կյանքին ու կենսագրությանն առնչվող բոլոր հարցերը, քանի որ, ըստ մեր աշխատանքի թեմայի, մենք կանգ ենք առնելու մեծանուն ու փառաշատ տոմարագետի տոմարի տարբեր հարցերին վերաբերող մեկնությունների եւ «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագրում առկա տոմարական կնճիռների հետազոտման վրա: Նախ նշենք, որ նշյալ բնագիրը եղել է Անանիա Շիրակացու տոմարական մատյանի՝ «Քննիկոնի» մեջ եւ կազմել է նրա մի մասը:

Տոմարի մատյանի մեջ առկա են 28 կանոն, որոնց մասին հայտնում է հեղինակը՝ «Անանիա Շիրակայնւոյ համարողի ասացեալ Զատկին Տեառն» կոչվող ճառի հիշատակարանում, 19-ամյա «Լուսնացոյցը», որից պահպանվել է միայն հիշատակարանը, իսկ «Պատճէններում»՝ Լուսնի ծնունդն ու լրումը գտնելու կանոնները, Լուսնի զատկական լրման 19-ամյակի աղյուսակները եւ 9 ազգերի տոմարների «Պատճէնները»՝ իրենց տեսական ու գործնական հատվածներով *(տես նույն տեղում, էջ 98)*: Մենք այս ենթագլխում կխոսենք «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» տոմարի մեկնության շուրջ: Պետք է նշել, որ հայկական ձեռագրերում պահպանվել են տոմարներին վերաբերող մեկնություններ: Դրանցից մեկը գրչագրերի մի խմբում կրում է «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» վերնագիրը, իսկ մյուսը, որն ավելի ընդարձակ է, անվերնագիր է: Վերջինս հրատարակել է Աշոտ Աբրահամյանը եւ այն վերագրել Անանիա Շիրակացուն: Հ. Անասյանն ասել է, որ Աբրահամյանն անհիմն է նման բան կատարել: Ընդունելով այս քննադատությունը՝ Աշոտ Աբրահամյանն այս երկը համարել է Անդրեասի տոմարի մի մաս, որը մեկնել է Անանիա Շիրակացին *(տես նույն տեղում, տես նաեւ Ա. Աբրահամյան, Անդրեասի տոմարագիտական աշխատությունները, Բնագիտության եւ տեխնիկայի պատմությունը Հայաստանում, Գիտական հետազոտությունների ժողովածու, հտ. Զ., Եր., 1967, էջ 65)*: Իսկ Ռ. Վարդանյանի ուսումնասիրությունները հանգեցնում են այն եղելությանը, որ այդ մեկնության հեղինակը հենց Անանիա Շիրակացին է *(տես Ռ. Վարդանյան, նույն տեղում)*: Դրա հիմնավորումը կապված է հետեւյալ փաստարկների հետ. քննարկվող բնագրում վերլուծված են գտնվում Շ-յակ համակարգն ու դրա բաղադրատարրերը, որոնք ստեղծվել են 562 թվականին, երբ ավարտվել էր Անդրեասի 200-ամյա զատկացուցակը՝ դեռեւս 552 թվականին: Սա է պատճառը, որ այն չէր կարող լինել Անդրեասի տոմարը կամ դրա մի մասը: Նշյալ բնագրում քննվում են նաեւ Հայոց շարժական տոմարի եւ թվաբանության հարցեր՝ կապված Հայոց Շ-յակի հետ: Եվ, ըստ Վարդանյանի փաստարկումների, այդ բնագրի երկու հատվածների հեղինակն էլ Անանիա Շիրակացին է, եւ այդ հիմնավորումները Վարդանյանը գտնում է Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» աշխատության մի հատվածի մեջ, ինչպես նաեւ Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի զոր արարեալ է Յոհաննիսի վարդապետի, զոր մականուն Կոզեռն կոչեցեալ» բնագրում: Հավելենք նաեւ, որ ուսումնասիրողը նշում է, թե «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» վերնագիրը կարելի է սրբագրել «Մեկնութիւն տոմարի Անանիայի» կամ «Մեկնութիւն տոմարի Անանիայի Շիրակացւոյ համարողի» եւ դնել Շիրակացու տոմարական մատյանի մեջ *(տես նույն տեղում, էջ 98, 104)*: Նշենք, որ Հովհաննես Կոզեռնի նշյալ բնագրի քննությանն է նվիրված լինելու մեր աշխատանքի հաջորդ հատվածը: Եվ մենք ցույց կտանք, թե ինչքան նմանություններ կան Շիրակացու եւ Կոզեռնի «Տոմարի մեկնութիւնների» մեջ: Եվ դա զարմանալի չէ, քանզի ինչպես ասացինք վերոնշյալում, Կոզեռնը մեծապես օգտվել է Շիրակացու աշխատություններից: Այս 2 բնագրերի ուշադիր զննությունը հանգեցնում է այն եզրակացության, որ դրանք Անանիա Շիրակացու տոմարական մատյանում եղած մեկնության հատվածներ են, եւ Հովհաննես Կոզեռնն իր նյութը հիմնականում քաղել է Անանիա Շիրակացուց *(այս մասին է խոսում եւ նույն կարծիքն է հայտնում նաեւ Ռ. Վարդանյանը, տես Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 104)*:

Շարունակությունը՝ էջ 7

Շահան Շահնուրի մի պատմվածքի գրական-գաղափարական մեկնումը

Սկիզբը՝ էջ 5

Ասում ենք գրեթե, քանի որ պահպանվել է հիմնականը՝ **պահպանելը**, կարեւոր չէ, թե նրանք՝ այդ պահապանները, հոգնակի են թե եզակի: Երկու դեպքում էլ պատմվածքի գլխավոր հերոսը պահապանը չէ: Շահնուրն այստեղ կիրառել է պատումի իր նախասիրած հնարքներից մեկը՝ կրկնակերպավորումը, որտեղ պատմվածքի հերոս Էմիլ-հեղինակը, որ խոսում է ինչպես *«ես՝ ինծի»*, հանդես է գալիս որպես դատողությունների ու բնութագրումների այն *«բանալի որոնողը»*, որ պիտի սարքի գցի ոչ միայն խափանված գործիքը, այլեւ իսկական սիրո, նվիրման ու բարության մարդասիրական գաղափարներ առաջադրի, ջատագովի սերը, որը փականներ կոտրող բանալին է: Պարտեզի պահապանի հարցին, թե *«ո՞ւր է բանալին»*, հնչում է պատասխանը. *«Սերը»*: Մի սեր, որի մասին Շահնուրն իր «Յարալէզներուն դաւաճանութիւնը» գործում եւս պիտի գրեր՝ սեր առ ազգակիցը, ասել է՝ ամեն հայկականը. *«…ինք փրկութիւնը կը տեսնէր սիրոյ եւ յոյսի մէջ: Միշտ աւելի մեծ սէր, միշտ աւելի մեծ յոյս» (Շահնուր Շ., Յարալէզներուն դաւաճանութիւնը, Փարիզ, 1933, էջ198)*:

Լինելով հանդերձ հեղինակի խոսափողը՝ Էմիլը միեւնույն ժամանակ խորհրդանիշ է արվեստագետի ու գրողի այն տեսակի, որին մերժում էր Շահնուր քննադատը (Վ. Շուշանյանն անգամ տվել է ավագ սերնդի նման ներկայացուցչի անունը՝ Արշակ Չոպանյան): Շահնուրի դիրքորոշումը հստակ է. գրողն ու արվեստագետը՝ իբրեւ պահապաններ անարատ խոսքի ու մտքի, չպետք է արձագանքեն ամեն հնչած կանչի եւ բարոյական ու գաղափարական կյանքի իսկական ու մնայուն արժեքների պահապաններ պետք է լինեն:

Էմիլի ապրելակերպի ու մտածման փոփոխական ձեւն արտաքին կյանքի թելադրանքներից է առաջացել, որին հեղինակը հակադրում է Լյուքսեմբուրգի պարտեզի *«տեւական բնակիչների»*՝ արվեստի ու մտքի գործիչների՝ *«գաղափարապաշտ»* բանաստեղծների ու վիպասանների կեցվածքն ու նրանց մարմնավորած արձանների արտահայտած խորին խորհուրդը՝ *«անսալով իրենց ներքին ձայնին»*՝ ճիշտ եւ ճիշտ *«սինեմայի գործիքի»* նման, **«որ կը յայտնէ անհիշխանական հակումներ…»** (ընդգծումը – Ա. Ա.): Մի կողմից՝ չտրվել գրական նորաձեւություններին, մյուս կողմից՝ հակադրվել ու հակազդել դոգմաներին ու ընդունված *«գաղափարախօսութիւններին»*. սա է իսկական գրողի կոչումը: Ամեն արվեստագետ պարտավոր է ոչ թե պահակի դեր ստանձնել, այլ պարտիզպանի, չլինել *«կրկնակ էակ մը»* եւ ոչ էլ՝ *«համազգեստ մը»*, այսինքն՝ ընտրել «*ապահովութիւնը*», այլ լինել *«մարդ մը առաւել»*, ինչպես Լյուքսեմբուրգի պարտեզի տեւական բնակիչները, որոնք չեն կրում *«ոչ մէկ համազգեստ»*, մանկամիտ չեն եւ մանավադ *«առանց ընտրութեան»* չեն, որպեսզի գործիքի *«պարզ տինկտանկը»* չստանա *«մեծ ծաւալ գիշերային լռութեան մէջ»*:

Իր պատմվածքում Շահնուրն անդրադառնում է հասարակությանը կառավարող նաեւ մի այլ իրողության, որին պատկանում է հրապարակը՝ մեծ դրամագլխին, երկրորդ *«սինեմայում»* ակնարկված *«ձոյլ արծաթին»*, որը *«կկզած»* է մարդկանց ետեւում եւ *«կը քաշէ անտեսանելի թելերը»*՝ նրանց կյանքը դարձնելով դժոխք:

Սփյուռքահայ գրականության մեջ այդ *«անհիշխանական հակումների»*, ըմբոստության, գրողի սեփական ներքին ձայնի ունկնդրման ու այդ ամենի արտահայտման բացակայության, կեղծ ազգասիրության, ուրեմն եւ կեղծ սիրո դեմ է, որ գրում է Շահնուրն իր պատմվածքում, ընդվզում հայ ազգային-քաղաքական այն դավանանքի դեմ, որ նահանջողական էր իր բնույթով. բաներ, որոնց մասին նա արդեն խոսել էր իր «Նահանջը առանց երգի» վեպով ու «Ավագ ուրբաթ» պատմվածքով, եւ կոչ անում *«կէսարթուն»* վիճակում հայտնված իր ազգակիցներին ու *«դիւրաբորբոք գրիչներուն»* չարձագանքել սին կանչերին, նրանց, որ ի վնաս արվեստի, *«հրապարակ կը նետուին»*՝ խավարից ելած ամեն խոսքի, կոչի ու ձայնի առիթով:

Ամեն բանից վեր՝ **ինքնաճանաչում**, որն ըստ Շահնուրի՝ նշանակում էր ոչ միայն *«մէր մէջը իջնել»*, այլեւ ճանաչել կյանքը եւ այդ կյանքի ընթացքին համահունչ քայլել: Արվեստագետի, մանավանդ գրողի այս կոչման վերաբերյալ Շահնուրն իր «Ավագ ուրբաթ» գործում գրել է, որ բնությունը *«…երբեք չի ներեր անոնց, որոնք իրմէ աւելի դանդաղ կիառաջանան:* **Ան երբեք չի ներեր անոնց, որոնք իրմէ աւելի արագ կիառաջանան**» (ընդգծումը – *Ա. Ա.*) *(«Զուարթնոց», Փարիզ, 1930, թիւ 8)*:

Պատմվածքում հասարակության, կյանքի, մշակույթի ու գրականության նկատմամբ շահնուրյան տեսակետը հստակ է. *«-Ես կը նախընտրեմ սուտը, որ այլեւս սուտ չէ, եւ ճշմարիտը, որ աւելի բան մը է, քան թէ ճշմարիտը»* (էջ 19):

Շահնուրի պատմվածքն ավարտվում է գործիքի ցուցադրած երրորդ պատկերով, որը խորհրդանշական ասելիք ունի: Ոգի-աղջնակը գլորում է պտուղներ, որ գնդակ-մոլորակներ են: Այդ ոգին ոստնում է մի մոլորակից մյուսը եւ գնում ձուլվում *«անեզրութեան ծոցին»*: Այն ոգին, որի մասին դեռ պատմվածքի սկզբնամասում ասվում է. «*Բազմաթիվ միսթիք տեսանողներ նկարագրած են Սուրբ Կոյսը: Դիմագիծը՝ այսպէս, քողը՝ այսպէս, վերարկուին ծալքերը՝ այսպէս: Արդիւնքը:* **Կը մնայ ոգին**» (ընդգծումը – Ա. Ա., էջ 9): Ահա այդ դեպքում է, այսինքն՝ գրականության եւ արվեստի մեջ ոգու առկայության, որ *«Անհունը»* տեսանելի է դառնում *«մօտէն»*: «*Քաղցր եւ մելամաղձոտ էր ամէն ինչ…*»,– գրում է Շահնուրը (էջ 20):

Կյանքը *«հրաշակետ մը»* կարող է լինել: Հարցն ազատ ընտրությամբ *«զայն վարել գիտնալն»* է: Մնում է սահմանել գեղեցիկը, եւ ինչպես գրում է Շահնուրն իր «Վարար ջուրեր» հուշագրություն-էսսեում, *«…ինչ որ գեղեցիկ է, վերջ ի վերջոյ ոգեղէն է»*, որը կարելի է եւ շրջադասել. ինչ որ ոգեղեն է, ի վերջո գեղեցիկ է: Իսկ ո՞ւր մնաց պատմվածքում արվող հարցումը՝ ի՞նչ բան է բանաստեղծությունը: Այսինքն՝ այդ ոգու եւ մանավանդ արվեստի մեջ բարձրագույնը: Շահնուրը տալիս է նաեւ այդ հարցի պատասխանը. *«…Դուն երբեւիցէ տեսած ես յուսահատ մայր մը»* (էջ 20), որ նշանակում է՝ տեսե՞լ ես բուն կյանքը, որը դժվարին մի բան է:

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հայոց լինելութեան խորհուրդը

Ս. Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» վեպում

Սկիզբը՝ էջ 5

Կերպարների հարուստ տիպաշխարհը, թեմայի հայրենասիրական ուղղվածությունը, ընդգրկման խորությունը նոր տեսանկյունից բացահայտեցին հեղինակի մտածողությունը:

Ս. Ալաջաջյանը պատկերում է հայոց պատմության ամենադրամատիկ էջերից մեկը՝ արդիական հայացքով բարձրացնելով հանգուցային լուրջ հարցեր: Նույնիսկ Դեր Զորի ահավոր սպանդն ապրած հայության բեկորները դեռ միամտություն ունեին հավատալու եվրոպական դիվանագիտությանը, թե իբր Կիլիկիայում կստեղծվի ինքնավար պետականություն՝ իրենց ապահովագրելով թուրք ջարդարարների կողմից նոր ոճիրների ենթարկվելուց: Հողի եւ ջրի մարդիկ ապաստանել էին Զեյթունի լեռնաշխարհում՝ խաղաղ ապրելու հույսով: Սակայն իթթիհատականներից հետո թուրք զինվորական կառավարողները շարունակեցին իրենց նախորդների նենգադավ քաղաքականությունը: 1918–1921 թվականներին նրանք եվրոպական տերությունների առջեւ վերջնական հաշվեհարդար տեսան Մարաշի, Զեյթունի, Հաճընի եւ այլ բնակավայրերի մարդկանց հետ: Փրկված մարդիկ, օրհասական կռիվներ մղելով, լքեցին իրենց հայրենի եզերքը՝ հայտնվելով Մերձավոր Արեւելքում:

Վիպագրի անսահման սերն ու կարոտը հայրենի եզերքի նկատմամբ դուրս է հորդում յուրաքանչյուր էջից: Զեյթունը կմեռնի, բայց բռնությունը երբեք չի հանդուրժի: Տեղահանությունն սկսվեց Զեյթունից: Հայաթափումն սկսվեց 1914 թ. սեպտեմբերին եւ ավարտվեց 1915 թ. մայիս–հունիս ամիսներին: Մարաշի կառավարիչ նշանակվեց հայատյաց Ալի Հայդարը: Նա ձերբակալեց Զեյթունի վերնախավի հայտնի եւ հարգարժան անձանց՝ 320 հոգու, այդ թվում՝ 1895–1896 թթ. հերոսամարտի կազմակերպիչներից մեկին՝ քաղաքագլուխ Նազարեթ Չաուշին: Նրանց բոլորին ուղարկեցին Մարաշի բանտ, որտեղ մեծ մասն սպանվեց: Ապրիլին տարագրության ճամփան բռնեցին Զեյթունի Պոզպայրի, Գարըկլար եւ Միջին թաղերի բնակիչները: Նույն ժամանակահատվածում տեղահանվեցին նաեւ գավառակի Արեգին, Ալապողան, Գոչող, Ղուրա, Հաճիտերե, Կոսճուղաս, Սյունե, Քյոմե-Սյոյոլա, Ֆենկ, Ֆռնուզ, Շիվիլիկ գյուղերը, իսկ մայիսի կեսին բռնագաղթի ենթարկվեցին գյուղաքաղաքի եւ գավառակի վերջին 400 ընտանիքները:

Զեյթունի եւ գավառակի բռնագաղթի ենթարկված 30000 հայությունից ավելի քան 8000-ն աքսորվեց Կոնիա, իսկ մնացածը՝ Դեր Զոր: Տարագրությունը տեղի էր ունենում ամենադաժան եւ դժոխային պայմաններում: Պողանթիից Ադանա ընկած ճանապարհին՝ Գարա-Փունար կոչվող վայրում, զեյթունցի տարագրյալներից օրական 150–200 մարդ էր մահանում:

Չնայած այս պայմաններին՝ զեյթունցին շարունակեց իր կռիվը, սրբազան վրեժի զգացումով դիմագրավեց թշնամուն: Զեյթունի հայության տարագրությունից հետո թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ Լեռնային Կիլիկիայի մնացած բնակավայրերի հայության տեղահանությանը: Զեյթունի հետ տեղի ունեցավ Դյորթ-Յոլի բռնագաղթը: Մայիսի 5-ից հունիսի 6-ը մասնակի ջարդերով տարագրվեց Դյորթ-Յոլի եւ շրջակայքի 22 000 հայությունը, որից անմիջապես հետո ամբողջ շրջանը բնակեցվեց թուրքերով:

Վերոհիշյալ դեպքերից հետո ջարդերը տարածվեցին Կիլիկիայի վարչատնտեսական կենտրոն Ադանայում: Այստեղ երիտթուրքերն առաջին հերթին տարագրեցին ու ոչնչացրին մտավորականությանը, ազգային գործիչներին, հայտնի քաղաքացիներին եւ ազդեցիկ անձանց: Ադանայի վիլայեթից եւ արեւելյան շրջաններից տարագրված հայ ընտանիքների թիվը 10 000 էր: Տարագրության եւ կոտորածների ենթարկվեց քաղաքի եւ հարակից շրջանների մոտ 38 000 հայությունը: Տեղահանելով հայերին՝ թուրքերը տարագրության ճանապարհին գործի էին դնում սպանության բոլոր միջոցները. գաղթախմբերի վրա էին հարձակվում թուրք խառնամբոխը, հատուկ ստեղծված ավազակախմբերը, ոստիկանությունը, քրդական ուժերը, իսկ պակասը լրացնում էին ճանապարհի դժվարությունները, անապատային տաժանելի պայմանները, սովը եւ բազմաթիվ հիվանդություններ:

Հաճնի տարագրությունն իրականացրեց Ադանայի պատերազմական ատյանի (ռազմական դատարանի) նախագահ Ավնի բեյը: Ապստամբության բարձրացման կեղծ մեղադրանքով նա ձերբակալեց «Հնչակյան» կուսակցության 35 անդամի: Զինաթափելուց մոտ 20 օր անց Հաճն մտավ Զեյթունի հայությանը տարագրող Ֆահրի փաշան: Նա ձերբակալեց քաղաքի առավել ազդեցիկ, հարուստ եւ տեղի հայության շրջանում մեծ հեղինակություն վայելող 200 հայի՝ դրանով իսկ բարոյապես գլխատելով քաղաքի հայությանը: Կարճ ժամանակում տարագրվեց Հաճնի 35 000 հայությունը: Ողջ մնացին ընդամենը 350 մանուկներ ու ծերեր:

Հաճնի հայության հետ դատաստան տեսնելուց հետո երիտթուրքերն անմիջապես ձեռնամուխ եղան Կիլիկիայի տնտեսական եւ մշակութային խոշոր կենտրոններից մեկի՝ Հալեպի վիլայեթի Այնթապի շուրջ 30 հազար հայության տեղահանությանը: Աղետը պայթեց հունիսի 15-ին, երբ կառավարությունն ազդարարեց, թե Այնթապի հայերը, ռազմական անհրաժեշտությունից ելնելով, երեք ամսով պետք է տեղահանվեն: Ընդամենը երկու օր անց՝ հունիսի 17-ին, խումբ առ խումբ սկսվեց այնթապցիների տեղահանությունը, որը շարունակվեց մի քանի ամիս:

Տեղահանվեց նաեւ Հալեպի վիլայեթի հայ բնակչությունը (Ալպիսթանից, Գյոքսունից, Անտիոքից, Թաշոլուկից, Գեբենից, Շիվիլիկից եւ այլն): Անմեղ զոհերը ենթարկվում էին անմարդկային տանջանքների, հոգեկան եւ ֆիզիկական անլուր տառապանքների, մարդկային արժանապատվությունը ստորացնող անթիվ բռնությունների: Տարագրյալներից այլընտրանք կար միայն կանանց համար, եթե վերջիններս ընդունեին մահմեդականություն եւ ամուսնանային թուրքերի հետ, սակայն նման շատ քիչ փաստեր են հայտնի:

Հայերին կոտորում էին տարբեր մեթոդներով՝ այրում էին կենդանի, գնդակահարում, դաշունահարում, կապում տրորում միմյանց եւ ցած շպրտում բարձրությունից, նետում ջրհորները, մորթազերծ անում, գցում ձիերի սմբակների տակ, թաղում կենդանի: Միայն Եփրատի ափին գտնվող Մեսքենե գաղթակայանում սրի քաշվեց 55 000 մարդ: Անցնելով Դեր Զորից մինչեւ Մոսուլ ընկած 350 կմ տարածությունը՝ 19 000 հայերից ողջ մնացին ընդամենը 2500-ը:

Նման պայմաններում Ս. Ալաջաջյանի հերոսները դրսեւորում են մեծ հերոսականություն: Հատկապես առանձնանում են ժողովրդի մարդիկ՝ Բու Մանուկը, Ժանգ Սեդրակը, Անհոգ Տրդատը, ծերուկ Թումասն ու ուրիշներ: Հիշողության մեջ նստվածք են տալիս Օսանը՝ իր ապրումներով, Զաբելը՝ իր վճռականությամբ, Դշխուհին՝ կենսախինդ բնավորությամբ:

Արդի արձակի հերոսներ են դառնում հասարակ մարդիկ, այդ հերոսներն իրենց մեջ խտացնում են ժողովրդական կյանքին ու մտածողությանը բնորոշ հոգեբանություն:

Շարունակելի

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Անանիա Շիրակացին եւ իր «Մեկնութիւն տոմարի» ժողովածուն

Սկիզբը՝ էջ 4, 6

Վարդանյանը նաեւ կարծում է, որ Անանիա Շիրակացու մեկնության հավանական խմբագիրը Հովհաննես Սարկավագն է, որից եւ ընդօրինակվել է հարցուպատասխանիքը եւ հասել մեզ *(տես նույն տեղում)*:

Ինչպես արդեն նշեցինք, Անանիա Շիրակացու տոմարական մատյանի մեջ են եղել տոմարագետի հեղինակած 28 կանոնները, որոնց մասին հայտնում է Շ-յակ զատկացուցակի հիշատակարանը:

Այն առկա է նաեւ տոմարական ժողովածուների, ինչպես նաեւ Հովհաննես Կոզեռնի մեկնության մեջ՝ որպես մեկնության հատված: Իսկ եթե խոսենք Հայոց շարժական տոմարի մեկնության վերաբերյալ, կարող ենք ասել, որ դրա մի մասը պահպանվել է ՄՄ հմր 2679 գրչագրում, այն է՝ Լուսնի լրման 19-ամյակը եւ Հայոց շարժական տոմարով լրման օրը գտնելու կանոնները, ապա դրանք առկա են «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» վերնագիրն ունեցող կամ անվերնագիր հարցուպատասխանիքի ձեւով գրված տոմարական ժողովածուների մեջ:

Այդ 28 կանոնների հարցերն ունեն հետեւյալ վերնագրերը. *«Զինչ է ժամանակ կամ զինչ հոլով ժամանակաց, զինչ է ողոմպիադն, զինչ է ընդիքտիոն, զինչ է բեսեքիստոն, զինչ է յոբելեանն, զինչ է թուական, զինչ է նահանջ, զինչ է նահանջից նահանջն, զինչ է Թ եւ Ժ-երեակ, զինչ է ԻԸ-երեակք, զինչ է բռնմաղ, զինչ է կաղանդ եւ կաղանդիկոս, զինչ է նոնոսն, զինչ է իդոսն, զինչ է հնգեակ, զինչ է վեցեակ, զինչ է Ե թիւ ժամ կատարեմք, զինչ է, որ Դ կրկնեմք զքանիս Լուսնին՝ յորժամ գիշերի զորչափն գնալն կամիցիմք գիտել, զինչ է, որ ԲԺ-անապատկեմք, յորժամ ի կենդանատեսակսն յորումս կամիցիմք գիտել, զինչ է, որ զեկամուտն ի նահանջէն յաւելիսն ասեն եբրայեցւոց եւ այլոց, որ (անշարժ) իւք վարեալ ամիսն աւուրքք եւ ոչ պատշաճի, զինչ է, որ ԺԲ ամիս է տարին, զինչ է Ե, որ ՅԿԵ օր է, զինչ է տարին եւ ամեն»* (տես նույն տեղում, էջ 106): Այս ամենից պարզ է դառնում, որ այս կանոնների մեջ, որոնք 28-ն են, Անանիա Շիրակացին սահմանել է թվականը եւ դրա դրսեւորումները, ինչպիսիք են՝ օլիմպիադը (4-ամյա ցիկլ), ինդիկտիոնը (15-ամյա ցիկլ), հոբելյանը (50-ամյա ցիկլ), նոնոսը (5-ամյա ցիկլ), իդոսը (8-ամյա ցիկլ): Բացի այս ամենից, մեկնել է, թե ինչ է տարին, կաղանդն ու կաղանդիոսը: Մեծահռչակ տոմարագետը բացատրել, սահմանել ու մեկնել է նաեւ տարբեր ազգերի տոմարներում կիրառված տոմարական հասկացություններն ու դրանց բաղադրատարրերը, որպիսիք են՝ բեսեքիստոնը կամ քսանութերյակը (շաբաթական շարքի 28-ամյա ցիկլ), նահանջը, տասնիններյակը, հնգյակը, վեցյակը, վերադիրը, յոթներյակը, միջոցը, Զատկի լրումը, Ե թիվը, Կ թիվը, չորեքկնեմքը, ԲԺ-անապատկեմքը, «ի նահանջէն յաւելիսն» եւ այլն: Վարդանյանը նշում է, որ թվարկվածների կոնկրետ դրսեւորումները արտացոլվում են Շ-յակի հռոմեացոց ու հայոց շարքերում, «Լուսնացոյցում», ինչպես նաեւ ազգերի տոմարների պատճեններում *(տես նույն տեղում)*: Իսկ մեկնության հաջորդ հատվածում, որը հրատարակել է Ջ. Էյնաթյանը *(տես Ջ. Էյնաթյան, Տիեզերագիտության եւ տոմարի մեկնություններ, Եր., 2015 էջ 55–60)*, անդրադառնում է հետեւյալ խնդիրներին՝ *«Զինչ է տոմար, զինչ է ամիս, զինչ է կրկնակ ամսոցն, զինչ է կիսակ, զինչ է շրջանն, զինչ է, որ երթամք ԻԸ (28), ԻԸ (28), յորժամ Է-երեակ տոմեմք, զինչ է գնալ ԻԸ (28), ԻԸ (28), եւ զԴ (4) մասն ի վերայ բերել, զինչ է, որ երթամք ԺԹ (19), ԺԹ (19), յորժամ վերադիր առնեմք Հ(ո)ռոմի, զինչ է, որ Ժ-երորդ կանոնին թիւ մի յաւելու, զինչ է բազմապատկեալն յաւելու, զինչ է ըստ նահանջիցն պակասեցո, զինչ է ԹԺ-երեկաց յաւել, զինչ է երթն Լ (30), Լ (30), զինչ է Գ (3) ի վերայ բեր կամ Դ (4) ի բաց երթ, զինչ է, որ օրն ԻԴ (24) ժամ, զինչ է, որ թաւալմամբ գնայ արեգակն, որպես գիտացին, թէ թաւալի արեգակն, զինչ է, որ Շ (500) ասպարեզ է Ա (1) յառաջխաղացումն արեգական, զինչ է, որ ի գիշերի ընդ երկրաւ դառնա արեգակն, զինչ է, որ ամսամտին ասէ՝ կալ թիւ մի, զինչ է՝ կալ հանապազ Լ (30), զինչ է, որ ասէ կալ հանապազ ԽԵ (45), զինչ է՝ կալ ԺԳ (13) եւ զնահանջն, զինչ է, որ յայտնութեանն ոչ ասէ արկանել ի վերայ, այլ ասէ՝ կալ զնահանջն եւ տուր մեհեկի, զինչ է, որ ասէ՝ կալ զվերադիրն, երթ առանց կիսակի, զինչ է՝ կալ ԽԶ (46), զինչ է, որ ասէ, թէ քան զհասարակածն աւելի է ի նոյն ամսեան է լրումն, եւ թէ՝ պակաս է՝ յառաջին ամիսն ելանէ»* (տես Ջ. Էյնաթյան, նույն տեղում, Ռ. Վարդանյան, նույն տեղում, էջ 107):



Շարունակելի

Գոռ ԳԱԼՍՏՅԱՆ

Հոգեհանգստյան աղոթք Խորանաշատ վանքում



ՄԱՐՏԻ 28-ին Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանը լուսաբացը դիմավորեց մարզի Չինարի գյուղում: Օրը հոբելյանական էր. գյուղը տոնում էր իր հերոս զավակի՝ Վահրամ Լեւոնի Սաղոյանի ծննդյան 48-ամյակը:

Լուսաբացին թեմի առաջնորդը տարածաշրջանի հոգեւոր հովիվ Արամ քահանայի, Չինարի համայնքի ղեկավարի, զինվորականների մասնակցությամբ հոգեհանգստյան աղոթք հնչեցրեց սահմանապահ Խորանաշատ վանքում:

25 տարի առաջ այս օրը՝ 1994 թվականի մարտի 28-ին, Խորանաշատի բարձունքն ազատագրվեց հայոց քաջարի մարտիկների կողմից: Ցավոք՝ կարճ ժամանակով: Բարձունքի գրավման մարտական գործողության ժամանակ իր կյանքը հերոսաբար զոհեց սահմանապահ Չինարի գյուղի խիզախ հայորդին՝ 23-ամյա Վահրամ Լեւոնի Սաղոյանը: Հենց նրա հերոսացման 25-րդ տարելիցն էր:

Համառոտ անդրադարձ կատարելով պատմական աղբյուրներին՝ նշենք, որ Խորանաշատի վանքը հիմնել է Վանական Վարդապետը 13-րդ դարի 1-ին կեսին՝ Վահրամյանների իշխանատիրույթի կողմնակալ-հրամանատար Վահրամ Բ Գագեցու հովանավորությամբ: Վանքի գլխավոր եկեղեցին՝ Սուրբ Աստվածածինը (1211–1222 թթ.) ունի գմբեթավոր դահլիճի հորինվածք՝ խորանում տասը կիսաշրջանաձեւ խորշերով (այստեղից էլ՝ Խորանաշատ անվանումը): Եկեղեցուն արեւմուտքից կից է քառասյուն կենտրոնագմբեթ գավիթը (1222–1240 թթ.): Ծածկի կենտրոնական հատվածում խաչվում են կամարներ, իսկ արեւմտյան մուտքի շուրջը կան պահպանիչ խորհրդանշանների բարձրաքանդակներ: Խորանաշատի հարավային կողմում կանգուն է Սուրբ Կիրակի փոքր գմբեթավոր եկեղեցին (13-րդ դար): Խորանաշատի հարավային պատին կա արեւային ժամացույց: Սուրբ Կիրակի եկեղեցուց դեպի արեւելք մատուռի ավերակներն են, այդտեղ կան տապանաքարեր եւ քանդակազարդ թեւավոր խոշոր խաչ, որն ավանդաբար համարվում է Վանական Վարդապետի գերեզմանաքարը: Խորանաշատ վանքը 1229 թ. ավերվել է Խորեզմի շահ Ջալալ էդ Դինի արշավանքից:

Խորանաշատի վանքի առաջին առաջնորդը եղել է Վանական Վարդապետը: 1244-ին վանահայր է դարձել Վանական Վարդապետի եղբորորդի Պողոս վարդապետը:

Խորանաշատը եղել է միջնադարյան Հայաստանի կրթական, գիտամշակութային ու աստվածաբանական ամենանշանավոր կենտրոններից մեկը: Հիմնել է Վանական Վարդապետը՝ 1220-ական թթ. սկզբին, եւ ինքն էլ վարել է վարդապետարանի ուսուցչապետությունը մինչեւ իր մահը (1251 թ.): Այնուհետեւ վարդապետարանը գլխավորել է նրա ազգական ու աշակերտ Գրիգորիս վարդապետը: Խորանաշատի վարդապետարանը եղել է պատմագրական թեքում ունեցող դպրոց, որտեղ ուսանել են 7–8 տարի: Դասավանդել են պատմություն, աստվածաբանություն, իմաստասիրություն, մատենագիտություն, երաժշտագիտություն, քերականագիտություն, աստղաբաշխություն, տոմարագիտություն, բնագիտություն, բուսագիտություն, նաեւ ընդօրինակել ձեռագրեր: Վանական Վարդապետի մի շարք երկեր («Մեկնութիւն Հոբայ», «Հարցմունք եւ պատասխանիք» եւ այլն) որպես դասագիրք կամ համառոտ ուղեցույց են ծառայել աշակերտների համար: Սաներից շատերն ուսումնառության տարիներին զբաղվել են գիտությամբ: Շրջանավարտներն ստացել են վարդապետական աստիճան եւ զբաղվել ինքնուրույն գործունեությամբ: Վարդապետարանի սաներից 13-րդ դարի Հայ Եկեղեցու եւ մշակույթի նշանավոր գործիչ Կիրակոս Գանձակեցին գրել է. «...գալիս էին առ նա ուսման աղագաւ ո՛չ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա եւ շարժումն անգիր օրէնք էին տեսողացն»: Այստեղ ուսանել են Վարդան Արեւելցին, Գրիգոր Ակներցին, Ստեփանոս Աղթամարցին, Առաքելը, Արտազ գավառի թեմակալ, դավանաբանական հարցերում մեծ հեղինակություն վայելող Հովսեփ վարդապետը, Խաչենի քաղաքական կյանքում ակնառու գործիչ Մարկոս վարդապետը, ականավոր փիլիսոփա Սոսթենեսը, Հայսմավուրքային ժողովածուների խմբագիր՝ Ներքին Խաչենի արքեպիսկոպոս Իսրայելը, Գրիգոր Աղթամարցին եւ ուրիշներ: Վանական Վարդապետի մահից հետո Խորանաշատի վարդապետարանի փառքը, ցավոք, սկսել է արագորեն խամրել: Սակայն վերելք են ապրել Խորանաշատ վանքի օրինակով ստեղծված բարձրագույն ուսումնագիտական կենտրոնները, որտեղ գործել են Վարդապետի աշակերտները:

Խորանաշատը եղել է գրչության կենտրոն: Մեզ են հասել այնտեղ գրված ձեռագրեր (մեծ մասը՝ 13-րդ դարից): Վանական Վարդապետն արժեքավոր գործեր է թողել, որոնցից են «Հարցմունք եւ պատասխանք», «Բարոյախոս» եւ «Մատյան ողբերգության» ձեռագրերը (1283 թ.): Դրանցից պահպանվել ու այժմ Մատենադարանում պահվում են մի «Ժողովածու»՝ գրված 1223-ին, «Նարեկ»՝ գրված 1283-ին, «Ավետարան»՝ գրված 15-րդ դարում, «Ժամգիրք»՝ գրված 1672-ին, «Մաշտոց»՝ գրված 1774-ին:

Այս ամենը պահպանելու համար էին 90-ականներին իրենց կյանքի գնով պայքարում հերոս տավուշցիները: Այժմ էլ սահմանին կանգնած յուրաքանչյուր զինվոր, սահմանամերձ գյուղի յուրաքանչյուր բնակիչ պատրաստ են անելու այն ամենը, ինչ 1994 թվականին արեցին շատ հայորդիներ, այդ թվում՝ Հերոս Սաղոյանը:

Աղոթքից առաջ իր խոսքում սրբազանը նշեց. «Ուզում եմ՝ փառք տանք Աստծուն, որ անընդհատ մեզ հնարավորություն է ընձեռում այցելել այս չքնաղ տունը՝ հոգեւոր ժառանգության կարեւորագույն կենտրոններից մեկը, որտեղ մեր ինքնությունն է կերտվել, որտեղից մեր հոգեւոր անվտանգությունն է ճառագել, որտեղ մեր կեցությունն ու մշակույթն են կերտվել, ստեղծվել»: Այնուհետեւ, դիմելով ներկա զինվորականներին, սրբազանն ասաց, որ այսօր ժամանակի թելադրանքով հենց նրանց է վիճակված պահպանելու հուշակոթողի, հոգեւոր տան անվտանգությունը: Այդ դժվարին, բայց պատվաբեր գործի համար զինվորականներին իր երախտիքի խոսքն ու շնորհակալությունը հայտնեց թեմի առաջնորդը:

Հավերժ փառք նահատակներին:

Անուշ ԱՂԱՍԱՐՅԱՆ

ԻՎԱՆ ԻԼՅԻՆ

«ԳԻՐՔ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԻ»

ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Դուք տառապու՞մ եք անքնությամբ: Անմխիթա՛ր վիճակ: Ինչպե՞ս դրանից ազատվենք: Ինչպե՞ս դրա հախից գանք:

Բայց հանկարծ չշտապեք դրանից «ձերբազատվել»: Կյանքում ոչ մի բան հենց այնպես չի լինում: Հիվանդությունն էլ: Անքնությունն էլ: Ամեն ինչ նպատակահարմար է, ամեն ինչ իր խորհուրդ խորինն ունի, ամեն ինչից հարկ է դաս քաղել: Ամեն ինչ իր ընծան ունի: Եվ խելացի չէ այդ ընծայից խուսափելը: Ինչո՞ւ չընդունել այդ նվիրաբերությունը: Անհամբեր քմահաճույք. ահա թե ինչն է փափագում անախորժությունից հապճեպ «փախչելու»: Մինչդեռ կենսական իմաստության գործելակերպն այլ է. նա կամենում է ընդունել նաեւ ոչ ախորժելին: Իսկ միգուցե ամենից նվիրականը հենց նրա պագեւն է... Այն ամենը, ինչ կամենում է արտահայտվել, պետք է իսկույնեւեթ արտահայտվի: Ահա անքնության վկայությունն իր իսկ մասին... Բարի գալուստ: Բայց միայն վախից չպապանձվենք նրա առաջ... Այլապես հոգին կկաշկանդվի ջղաձգությունից: Միայն թե պետք չէ փորձել այն հաղթահարել... Այլապես նա համառորեն կզորանա: Քունը միշտ աննկատ է տանում: Ուրեմն մենք էլ ամենասահուն քայլերով ընդառաջ ելնենք անքնությանը... Եվ ընդունենք նրա մատուցած նվերներն ու խրատները:

Մեր կամայականությունը սահման ունի. ահա քնազրկության առաջին դասը: Մեզանից եւ ոչ մեկն իր կյանքի միահեծան տիրակալը չէ: Ընդհակառակը, մենք հարկադրված ենք հաշվի նստել մեր բնության իրույթների (իմա՝ երեւույթ, փաստ) հետ. մենք պետք է հարմարվենք ու հնազանդվենք դրանց, որպեսզի մեր մեջ հաստատված աստվածային սկիզբը դառնա կյանքին, որպեսզի նա մեր մեջ ստեղծագործական հավասարակշռություն ձեռք բերի, որպեսզի հանգիստ գտնի: Եթե մենք դա չանենք, կկորցնենք մեր առողջությունը, հավասարակշռությունը, քունը մինչեւ այն պահը, երբ դրանք կրկին չվերականգնվեն «իր իսկ միջոցով»: «Իր իսկ միջոցով». ահա թե ինչպես է հնչում Արիստոտելի խորիմաստ, դիպուկ խոսքը... Դե՛, իսկ հիմա հարկ է սպասել մինչ քունն ինքնին չկարգավորվի: Անհո՛գ եղեք: Անքնությունը նման է ձանձրույթին. նա կհարատեւի, մինչեւ որ քունը սաստիկ կտանի:

Այնպես որ քնով անցնելու լավագույն միջոցն անքնությանը չխանգարելն է, դրան անձնատուր լինելը, այն մինչեւ վերջ խմելն է, ինչպես մինչեւ վերջին կաթիլն ըմպում են մատուցված գավաթը:

Իսկ ամենից լավը մոռանալն է, որ ժամանակն է կամ արդեն վաղուց է, ինչ եկել է քնելու ժամանակը. սեփական անքնության, նրա հնարավոր հետեւանքների եւ այլնի մասին բնավ չմտածելը, այլ անկեղծորեն ու անմնացորդ տրվելը կյանքի բովանդակություններին, որոնք անքաղաքավարիորեն ներխուժում եւ հալածում են մեր քունը: Թող գա ինչ ուզում է, թող գաղափարների եւ աֆեկտների ողջ կծիկը քանդվի: Մնացյալ աշխարհը կարող է քնել: Ես տրվում եմ իմ անքնությանն ու նրա ծպտյալ բովանդակություններին, որոնց համար օրվա ընթացքում «ժամանակ չեմ գտնում»: Ես մնում եմ մեն-մենակ ինքս ինձ հետ...

Այսպես քնատությունը բերում է իր երկրորդ ընծան, որն է՝ միայնությանը տոկալու ունակությունը: Անդ, ուր բոլորը լքել են ինձ,– ուր բոլորը, իրենց մեջ ամփոփվելով, մոռացել են ողջ աշխարհն ու ինձ, ուր ես միանգամայն մենակ եմ, անուշադրության մատնված, պառկում եմ խոր համոզմունքով առ այն, որ միմիայն ես եմ ի վիճակի ինքս ինձ օգնելու: Սկսվում է արտասովոր, բզկտված ու լարված կյանքը: Եվ այս կյանքը հաճախ չափազանց ինտենսիվ է, որպեսզի տաղտկալի դառնա. ընդհակառակը, հաճախ այնքան անսպասելի ու ապշեցուցիչ է, որ մեր մեջ իսկական հետաքրքրասիրություն է առաջացնում, իսկ հաճախ էլ այնքան լեցուն է իմաստով, որ ես ինձ զգում եմ, թե միայնության, ինքնուրույնության եւ ինքնատիրապետման խստաբարո դպրոցում եմ: Ա՜խ, աշխարհում ինչքան մարդ կա, որ միայն անքուն գիշերներն են զգացել ու գիտակցել իրենց հոգեկան ու հոգեւոր միայնությունը եւ, հավանաբար, միայն այդքան անմխիթար միայնությամբ պայմանավորված՝ աղաղակել առ Աստված, որ երկնքում է, եւ գտել Նրան: Որոհետեւ Նա ամենամոտն է անքնությամբ տառապողի կողքին բոլոր կանգնածներից: Անդ, ուր կյանքը թվում է բացարձակապես անմխիթար, անմիջապես մխիթարություն է ի հայտ գալիս: Անդ, ուր, թվում է, կործանվում ես միայնությանդ մեջ, ամենադյուրին կերպով ես առ Աստված ճանապարհ գտնում: Բայց չէ որ սա, անկասկած, ամենաազնիվ սփոփանքն ու ամենաթանկ ընծան է...

Իսկ այժմ անդրադառնանք քնազրկության երրորդ արժեքավոր պարգեւին: Սույն գիշերային արթնության մեջ սովորում ես պատկերացնել ու ականջ դնել սեփական չգիտակցված կամ կիսագիտակցված գաղտնարանների ծածուկ իմաստներին: Եվ ոչ միայն օրը ցերեկով բաժին հասած դառնություններին ու վիրավորանքներին, այլեւ՝ թաքուն Ես եմ - ի սխալներին, մեղքերին ու վերքերին: Եվ ոչ միայն դրանց, այլեւ՝ խղճմտանքի սուրբ ու կազդուրիչ ճառագայթներին: Բանն այն է, որ ոչինչ այնքան բարենպաստ ու այնքան համապատասխան չէ այդ լույսի ճառագայթների ընկալմանը, ինչպես կիսախավար անքնության գիտակցության մթագնած վիճակը: Անդ, ուր մարել է ցերեկային լույսը եւ գիտակցության լույսը, ու կուտակվում ու աճում է ներքին ճառագայթներն ընկալելու կարողությունը, եւ ուր առօրեական կյանքի մռայլ պատկերը կարոտում է նոր, անճառելի լույսին... Ա՜խ, ինչքան շատ մարդիկ կան, որոնք միայն արթուն գիշերներն են վերապրել խղճի խայթերի լուսավորող բարիքն ու զղջման ամոքիչ օրհնությունը՝ միայնակ, դառը, հաշտեցնող զղջման: Արդյոք սա չէ թանկագին նվերը: Արդյոք սա չէ անմխիթարությունից ծնված մխիթարությունը: Արդյոք ճի՞շտ են վարվում վեհերոտ մարդիկ, երբ, փորձելով խուսափել այս ընծաներից ու մխիթարությունից եւ առավոտյան «գունատ» չերեւավալու վախից, դիմում են դեղամիջոցների:

Քնատությունն արիություն է սովորեցնում մեզ: Արիություն բնության դեմ հանդիման, սեփական անձի դեմ հանդիման, խղճմտանքի դեմ հանդիման: Արիություն՝ մենության մեջ, եւ աղոթք՝ վերառաքելու համար:

Սա է նրա վերջին պարգեւն ու լավագույն մխիթարությունը:

Ռուսերենից թարգմանությունը՝
Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝ krishayas.wordpress.com
Ստորագրված է տպագրության 17.04.2019 թ.
Տպաքանակը՝ 1175